

Երիտասարդների մասնակցությունը Ջայաստանում որոշումների կայացման և խաղաղաշինության գործընթացներին

Ձեկույցը պատրաստել է «Խաղաղ փոփոխություններ նախաձեռնություն» միջազգային հասարակական կազմակերպությունը:

Հետազոտության դաշտային աշխատանքները համակարգել է «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

ԵՐԵՎԱՆ, 2019

Սույն զեկույցը մշակվել է «Խթանելով երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման և խաղաղության ոլորտներում» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության կառավարության Հակամարտությունների, կայունության և անվտանգության հիմնադրամի աջակցությամբ: Սույն զեկույցում արտահայտված տեսակետները հեղինակներին են և պարտադիր չէ, որ համընկնեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշման հետ:

1. Ամփոփագիր

Սույն զեկույցն ամփոփում է Հայաստանում որոշումների կայացման և խաղաղաշինության ոլորտներում երիտասարդների մասնակցության վերաբերյալ հետազոտության արդյունքներն ու դրանց վերլուծությունը՝ 2018թ-ի ապրիլից ի վեր քաղաքական փոփոխությունների համատեքստում: Տվյալ հետազոտությունն անց է կացվել «Խթանելով երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման և խաղաղության ոլորտներում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է «Խաղաղ փոփոխություններ նախաձեռնություն» միջազգային հասարակական կազմակերպության և Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոնի կողմից և ֆինանսավորվում է Միացյալ Թագավորության կառավարության Հակամարտությունների, կայունության և անվտանգության հիմնադրամի կողմից: Հետազոտությունն իրականացվել է երեք մեթոդով՝ ճիրակի, Սյունիքի և Տավուշի մարզերում երիտասարդ տղամարդկանց և կանանց հետ ֆոկլուս խմբեր, փորձագիտական հարցումներ խաղաղության և երիտասարդական քաղաքականության մասնագետների հետ և գրականության ուսումնասիրություն:

Հետազոտության արդյունքների հիման վրա առանձնացվել են հետևյալ հիմնական եզրակացությունները՝

- 2018-ի «Թավշյա հեղափոխությունից» առաջ երիտասարդությունը Հայաստանում մասնակցել է բազմաթիվ քաղաքական և քաղաքացիական շարժումների: Քաղաքական շարժումները, որպես կանոն, ձևավորվել են հետընտրական բողոքների արդյունքում և ունեցել են հստակ քաղաքական օրակարգ, մինչդեռ քաղաքացիական շարժումները հիմնականում եղել են ապաքաղաքական կամ առնվազն ապակուսակցական: Երիտասարդների մասնակցության տեսանկյունից առկա է հստակ տարբերակում շարժումների այս երկու տեսակների միջև. քաղաքացիական շարժումներում երիտասարդությունը գերակշռել է թե՛ առաջնորդների, և թե՛ մասնակիցների առումներով, մինչդեռ քաղաքական շարժումները առաջնորդվել են ավագ սերնդի գործիչների կողմից, իսկ երիտասարդությունը, որոշակի բացառություններով, մասնակիցների և աջակիցների ավելի մեծ զանգվածի մաս է հանդիսացել:
- 2018-ի բողոքի ցույցերում մեծ ներդրում ունեցան երիտասարդները: Ցույցերի արդյունքում փոխվեց քաղաքական վերնախավը, իսկ գործադիր և օրենսդիր մարմիններում ներգրավվեցին աննախադեպ թվով երիտասարդներ: Այնուամենայնիվ, երիտասարդների մասնակցության նման ծավալները դեռևս չի հանգեցրել առարկայական փոփոխությունների երիտասարդական քաղաքականության ոլորտում, քանի որ այն նոր կառավարության առաջնահերթությունների ցանկում ցածր տեղերում է: Ավելին, մտահոգություններ կան, որ նոր կառավարության օպտիմիզացիայի ծրագրի արդյունքում, մասնավորապես՝ երիտասարդության և սպորտի նախարարությունը այլ նախարարությունների հետ միավորելով, լրացուցիչ խոչընդոտներ ի հայտ կգան արդյունավետ երիտասարդական քաղաքականության ձևավորման գործում:

- Այսօր Չայաստանում գործում է թերևս ամենաերիտասարդ Կառավարությունն ու Ազգային ժողովը: Եթե սահմանենք երիտասարդներին որպես երեսուն տարին չլրացած անձանց, ապա Կառավարության կազմի 11.1%-ը երիտասարդներ են, իսկ եթե 30-40 տարեկաններին ևս դիտարկենք որպես երիտասարդներ, ապա այդ ցուցանիշը կհասնի 33.3%-ի:՝
- Ազգային ժողովում նույնպես բավական մեծ թիվ են կազմում երիտասարդ պատգամավորները: Ներկայիս խորհրդարանը թերևս ամենաերիտասարդն է ՀՀ պատմության մեջ՝ 7-րդ գումարման ԱԺ-ում նորընտիր պատգամավորների միջին տարիքը երեսունն է:՝ Պետք է հաշվի առնել նաև, որ ՀՀ օրենսդրության համաձայն՝ ԱԺ պատգամավորը պետք է լինի 25 տարին լրացած, և որոշ երիտասարդ քաղաքական ակտիվիստներ, որոնք մասնակցել էին բողոքի ցույցերին, չկարողացան առաջադրել իրենց թեկնածությունները:
- Չայաստանի երիտասարդ տղամարդիկ և կանայք առանձնացրել են իրենց տարիքային խմբի առջև ծառայած հետևյալ մարտահրավերները՝
 - գործազրկություն, տնտեսական հնարավորությունների բացակայություն,
 - կրթություն և մասնագիտական զարգացման հնարավորությունների անհասանելիություն և դրանց անհամապատասխանություն աշխատանքի շուկայի պահանջներին,
 - քաղաքային և գյուղական համայնքներում ենթակառուցվածքների անհամաչափ զարգացում,
 - անտարբերություն և մոտիվացիայի պակաս,
 - արտագաղթ,
 - չլուծված տարածաշրջանային հակամարտություններ:
- «Թավշյա հեղափոխությունից» հետո երիտասարդ կանայք և տղամարդիկ ակնկալում են իրենց ձայնը լսելի դարձնելու և իրենց ներուժը բացահայտելու ավելի մեծ հնարավորություններ: Նրանք ավելի տեղեկացված են և ներգրավված քաղաքական գործընթացներում: Այնուամենայնիվ, երիտասարդների մասնակցության առկա «վերնից ներքև» և «ներքևից վեր» մեխանիզմները բավականաչափ արդյունավետ չեն: Տեղական և ազգային մակարդակներում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդներին ավելի ակտիվ ներգրավելու համար պետք են նոր մոտեցումներ:
- Չնայած տղամարդիկ դեռևս շարունակում են գերիշխել քաղաքական մակարդակում, կանանց մասնակցությունը քաղաքացիական ոլորտի խնդիրներում գնալով մեծանում է:
- Չնայած նրան, որ 2018-ի շարժումը տեղի ունեցավ երիտասարդների ակտիվ մասնակցության շնորհիվ և իշխանության տարբեր օղակներ ներգրավվեցին անսախադեպ թվով երիտասարդներ, նոր իշխանությունները հապաղում են

¹ Կառավարության ներկայացուցիչների մասին մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել այստեղ՝ <https://www.gov.am/am/structure/>

² Ամփոփ Մեդիա, «Թեկնածուների միջին տարիք, ինքնաբացարկներ, ազգային փոքրամասնություններ և կանայք»՝ <https://ampop.am/>

արձագանքել երիտասարդական քաղաքականության և ռազմավարության անհրաժեշտության հարցերին: Ավելին, Կառավարության նոր ծրագրի շրջանակներում Սպորտի և երիտասարդության հարցերով նախարարությունը, որը պատասխանատու էր երիտասարդական քաղաքականության համար, միավորվեց Կրթության և գիտության, ինչպես նաև Մշակույթի նախարարությունների հետ:

- Երիտասարդ կանայք և տղամարդիկ հիմնականում պատրաստ են ադրբեջանցի և թուրք երիտասարդների հետ հաղորդակցման և երկխոսության: Այնուամենայնիվ, նրանք ծանոթ չեն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2250 բանաձևին, որը կոչ է անում մեծացնել երիտասարդների ներկայացվածությունը որոշումների կայացման բոլոր մակարդակներում: Երիտասարդները հավատացած են, որ երկարաժամկետ կտրվածքում խաղաղության կարելի է հասնել հասարակ մարդկանց միջև հաղորդակցության և ռազմատենչ կոչերի ու թշնամու կերպարի սերմանմանը հակադրվելով:

2. Ընդհանուր նկարագիր

Մեր օրերում երիտասարդների դերը իրենց հասարակությունների քաղաքական կյանքում աճում է: Սոցիալական, տնտեսական և տեխնոլոգիական նոր զարգացումները ավելի շատ հնարավորություններ են ընձեռում երիտասարդներին՝ մասնակցելու որոշումների կայացման գործընթացներին: Միաժամանակ, երիտասարդների առջև ծառանում են նոր մարտահրավերներ, որոնք առավելապես խոցելի են հենց նրանց համար: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի [2250 քանաձևը](#), կոչ է անում ՄԱԿ-ի անդամ պետություններին մեծացնել երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման բոլոր մակարդակներում:³ Այն կարևորում է երիտասարդների դերի նշանակությունը և անդրադառնում խաղաղության ու անվտանգության հարցերում երիտասարդների մարզինալացման խնդրին, ինչը խոչընդոտ է հանդիսանում կայուն և ներառական խաղաղության համար:

Այսօր Հայաստանը երիտասարդների համար նոր հնարավորությունների և մարտահրավերների վառ օրինակ է: Մի կողմից՝ վերջին տարիները իրենց հետ բերել են քաղաքական և հասարակական գործընթացներում երիտասարդության ներգրավվածության մի նոր մակարդակ, որի գագաթնակետն էր այսպես կոչված «թավշյա հեղափոխությունը», որի ընթացքում երիտասարդների բացառիկ մասնակցությամբ խաղաղ ցույցերը հանգեցրին ավտորիտար ռեժիմի պարտությանը և իշխանության բերեցին նոր քաղաքական վերնախավ, որում մեծ թիվ են կազմում երիտասարդները: Հարկ է նշել, որ «թավշյա հեղափոխությունից» մի քանի ամիս անց, երիտասարդների 88%-ը (18-29 տարեկան) ընկալում էին 2018-ի իշխանափոխությունը դրական:⁴

Միևնույն ժամանակ գործազրկությունը, աղքատությունը, բնակարանային ապահովման և այլ սոցիալ-տնտեսական խնդիրները շարունակում են բացասական ազդեցություն ունենալ երիտասարդների վրա: Արդյունքում մեծ թվով երիտասարդներ ստիպված են դիմել կա՛մ ժամանակավոր արտագնա աշխատանքի, կա՛մ մշտական արտագաղթի:

[2017-ի մարդահամարի](#) համաձայն՝ ՀՀ բնակչության մոտ 1/3-ը երիտասարդներ են (26.6%)⁵ Հայաստանի երիտասարդական քաղաքականության հայեցակարգը, որը մշակվել է 1998թ-ին, սահմանում է երիտասարդներին 16-ից 30 տարեկան անձանց:⁶ Հայաստանում չափահասության տարիքը 18 տարեկանն է, օրինական ամուսնության տարիքը՝ տղամարդկանց համար 18-ը, իսկ կանանց համար՝ 17-ը: Ընտրության իրավունքը տրվում է 18 տարեկանում: Ազգային ժողով ընտրվելու համար նվազագույն տարիքը 25-ն է: Բոլոր տղամարդիկ 18 տարին լրանալուն պես պարտավոր են երկու տարի ծառայել բանակում: Մինչև վերջերս մագիստրատուրայում և ասպիրանտուրայում սովորող տղամարդկանց տրվում էր բացառություն, սակայն այս տարկետման մեխանիզմը վերացվեց 2017-ի

³ <https://www.un.org/press/en/2015/sc12149.doc.htm>

⁴ Հանրային կարծիքի հետազոտություն՝ “Residents of Armenia”, July 23–August 15, 2018, Center for Insights in Survey Research, A Project of the International Republican Institute, p. 5, https://www.iri.org/sites/default/files/2018.10.9_armenia_poll_presentation.pdf

⁵ Մարդահամար 2011, <https://www.armstat.am/file/doc/99486128.pdf>

⁶ Հայաստանի պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգ, ընդունված ՀՀ Կառավարության կողմից, Երևան, 1998, էջ 2

վերջում: 2014թ-ին ընդունվեց նոր [Երիտասարդական քաղաքականության հայեցակարգ](#), որը սահմանում է հետագա տարիների առաջնահերթությունները երիտասարդական քաղաքականության ոլորտում:⁷

ՀՀ [Երիտասարդական պետական քաղաքականության 2018-22 թվականների ռազմավարությունը](#)⁸ (2017թ), որն այժմ սառեցված է, հիմնված է [2013-17 թվականների երիտասարդական պետական քաղաքականության](#)⁹, երիտասարդական քաղաքականության հայեցակարգերի (1998, 2014) և այլ հետազոտությունների վրա, ներառյալ Եվրոպայի խորհրդի կողմից իրականացված «[Երիտասարդական քաղաքականությունը Հայաստանում](#)» հետազոտությունը (2009):¹⁰

ՀՀ երիտասարդական քաղաքականության 2013-2017թթ-ի ռազմավարության ժամկետի լրանալուց հետո 2018-22թթ. ռազմավարությունը հետաձգվել է, որպեսզի վերանայվեն երիտասարդների ներկա կարիքներն ու իրավիճակը: Համաձայն [Եվրոպայի խորհրդի](#), «ՀՀ Սպորտի և երիտասարդության նախարարությունը ցանկանում էր ունենալ ավելի կուռ, քաղաքացիակենտրոն և ներառական ռազմավարություն... միգուցե նաև երիտասարդների մասին օրենք, որը կամրագրեր երիտասարդների, երիտասարդական աշխատողների և այլ շահագրգիռ կողմերի կարիքները՝ հիմնվելով երիտասարդական քաղաքականության եվրոպական չափանիշների և միջազգային փորձի վրա»:¹¹

Սակայն Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը միավորվեց Կրթության և Մշակույթի նախարարությունների հետ՝ դառնալով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ ինչը Նիկոլ Փաշինյանի կառավարության 2019թ. օպտիմալացման հետևանքն էր: «Երիտասարդություն» բառն ընդհանրապես հանվեց նախարարության անվանումից և պարզ չէ, թե ինչպես է ապագայում մշակվելու երիտասարդական քաղաքականությունը:

Երիտասարդությունը Հայաստանում շարունակում է բախվել ամենասուր խնդիրների, որոնք ներառում են տարաբնույթ սոցիալական հարցեր: Չնայած նրան, որ նոր Կառավարությունը չի մանրամասնել իր մոտեցումը երիտասարդական քաղաքականության վերաբերյալ, այն ուրվագծել է այլ քաղաքականություններ, որոնք առնչվում են երիտասարդությանը: Դրանց թվում է կառավարության «տնտեսական հեղափոխության» մոտեցումը, որը կոչված է ներառելու մի շարք քաղաքականություններ՝ փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման և աշխատուժի վերաորակավորման ուղղությամբ:

Մեկ այլ առաջնահերթություն է համարվում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը, որի ստվար զանգվածը երիտասարդությունն է: Այն նաև

⁷ Բաղվածք ՀՀ Կարավառության նիստի արձանագրությունից, 2014

<http://www.msy.am/files/post/1426864819-hayecakarg.pdf>

⁸ Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգ, 2018-2022

<https://www.e-draft.am/en/projects/482>

⁹ Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգ 2013-2017

<http://ystudies.am/>

¹⁰ Youth Policy in Armenia, Council of Europe publishing, 2009

¹¹ National Youth Policies, Council of Europe, [https://www.coe.int/en/web/youth/national-youth-policies#%2239921579%22:\[0\]](https://www.coe.int/en/web/youth/national-youth-policies#%2239921579%22:[0])

կոչված է կրճատելու մարզերի և Երևանի միջև անհամաչափ զարգացման անջրպետը. ինչն իր հերթին կմեղմի մարզերի երիտասարդների խնհրները: Կառավարությունը նախատեսում է նաև միջոցներ ձեռնարկել բնակարանային հարցի լուծումը ավելի հասանելի դարձնելու ուղղությամբ. ինչից մեծապես կշահեն երիտասարդները: Բոլոր այս քայլերը կոչված են կանգնեցնելու արտագաղթի միտումները՝ կանխելով ուղեղների արտահոսքը և աշխատուժի կորուստը. մասնավորապես բնակչության ամենաերիտասարդ զանգվածի շրջանում:

3. Մեթոդաբանություն

Չետագոտության հիմնական հարցը հետևյալն էր. արդյոք քաղաքական փոփոխությունները Հայաստանում երիտասարդների համար ստեղծել են որոշումների կայացման և խաղաղաշինության գործընթացներին մասնակցության նոր հնարավորություններ: Առանձնացվել էին հետևյալ ենթահարցերը՝

- որոնք են երիտասարդական քաղաքականության ներկայիս մոտեցումները.
- որոնք են որոշումների կայացման և խաղաղաշինության գործընթացներին երիտասարդների մասնակցության գոյություն ունեցող նախադրյալները.
- որոնք են երիտասարդների մասնակցության հնարավորությունները Հայաստանում որոշումների կայացման գործընթացներին.
- ինչ ազդեցություն են թողնում դարաբաղյան հակամարտությունն ու հայ-թուրքական հարաբերությունները երիտասարդների ապագայի վրա:

Չետագատությունն իրականացվել է երեք հիմնական մեթոդներով.

- գրականության ուսումնասիրություն՝ պարզելու երիտասարդների մասնակցության խնդիրները որոշումների կայացման և խաղաղաշինության ոլորտներում.
- Ֆոկուս խմբեր ՀՀ երեք մարզերի երիտասարդների շրջանում (Տավուշ, Սյունիք, Շիրակ).
- փորձագիտական հարցազրույցներ երիտասարդական քաղաքականության և մասնակցության խնդիրներով զբաղվող շահարգիչ կողմերի հետ:

Գրականության ուսումնասիրության միջոցով բացահայտվել է, թե ինչ դեր են ունեցել երիտասարդ տղամարդիկ և կանայք 2018-ի հեղափոխության ընթացքում և ինչ ազդեցություն նրանք կարող են ունենալ ներկայիս քաղաքական իրավիճակում՝ որոշումների կայացման և խաղաղաշինության գործընթացներում: Իրականացվել է երիտասարդների հասարակական ակտիվության և երիտասարդական քաղաքականության ներկայիս իրավիճակի ուսումնասիրություն՝ կառավարության և նախարարությունների կառուցվածքային փոփոխությունների համատեքստում: Ուսումնասիրվել են «թավշյա հեղափոխությանը» երիտասարդների մասնակցությանն առնչվող նյութերը համացանցում և այլ հրապարակումներ, ինչպես նաև այն խաղաղաշինական նախաձեռնությունները, որտեղ ներգրավված են երիտասարդները:

Ֆոկուս խմբերի նպատակն էր՝ պարզել Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց ընկալումները որոշումների կայացման և խաղաղաշինական գործընթացներում իրենց ներգրավվածության վերաբերյալ: Ֆոկուս խմբերն իրականացվել են Շիրակում, Սյունիքում և Տավուշում: Մարզերի ընտրությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ դրանք սահմանակից են Թուրքիային կամ Ադրբեջանին, հետևաբար այս մարզերի երիտասարդներն ապրում են մի միջավայրում, որտեղ մարդկանց կյանքն ամիջականորեն վտանգված է: Դրանից բացի, փակ սահմանները լրջորեն խոչընդոտում են երիտասարդների տնտեսական հնարավորությունների զարգացմանը:

Յուրաքանչյուր մարզում իրականացվել է երեքական ֆոկլուս խումբ: Յուրաքանչյուր մարզում խմբերից մեկը բաղկացած է եղել բացառապես **կանանցից**՝ ներառյալ ուսանողներին ու երիտասարդ մասնագետներին ղնդհանուր առմամբ երեք խումբ): Հետազոտության շրջանակներում գենդերային հարցը երիտասարդների մասնակցության գնահատման ուղղություններից մեկն էր: Երկրորդ խումբը յուրաքանչյուր մարզում կազմված էր երիտասարդ կանանցից և տղամարդկանցից, ներառյալ նրանք, ովքեր արդեն ունեն **խաղաղաշինության** փորձ ղնդհանուր առմամբ երեք խումբ): Երրորդ խումբը յուրաքանչյուր մարզում կազմված էր այն երիտասարդ կանանցից և տղամարդկանցից, որոնք ապրում են Թուրքիային կամ Ադրբեջանին **սահմանակից համայնքներում** ղնդհանուր առմամբ երեք խումբ):

Ընդհանուր առմամբ ֆոկլուս խմբերին մասնակցել է 77 երիտասարդ՝ 27 հոգի Շիրակից, 27-ը՝ Տավուշից, և 23-ը՝ Սյունիքից: Նրանք ներկայացրել են 23 բնակավայր: Մասնակիցներից 45-ը ներկայացրել են քաղաքային համայնքներ, իսկ 32-ը՝ գյուղական: Հարցվածների 75 տոկոսը կանայք էին և 25 տոկոսը՝ տղամարդիկ: Հարցվածների միջին տարիքը 23 է:

Հարցվածների 56%-ն ունի բարձրագույն կրթություն, իսկ 27%-ը ֆոկլուս խմբերի իրականացման պահին ուսանող էր: Մասնակիցներից չորսն անցել էին վերապատրաստում, իսկ հինգն ունեին միջնակարգ կրթություն:¹²

Փորձագիտական հարցազրույցների նպատակն էր պարզել հասարակական ոլորտում ներգրավված երիտասարդ առաջնորդների, երիտասարդական քաղաքականության ոլորտում որոշումներ կայացնողների, ինչպես նաև խաղաղաշինության ոլորտի մասնագետների կարծիքները: Ընդհանուր առմամբ անց է կացվել 10 փորձագիտական հարցազրույց, որոնցից 5-ը՝ Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի, Արտաքին հարաբերությունների և Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովներ/ և Կառավարության ներկայացուցիչների հետ (Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն): Մյուս 5 հարցազրույցներն իրականացվել են երիտասարդական քաղաքականության ոլորտում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հարցվածներից 4-ը տղամարդիկ են, 6-ը՝ կանայք: Նրանցից երկուսն ունեն գիտությունների թեկնածուի աստիճան, իսկ 8-ը՝ մագիստրոսի:

Ֆոկլուս խմբերի և փորձագիտական հարցումների ուղեցույցները մշակվել են «խաղաղ փոփոխություններ նախաձեռնության» և Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոնի» կողմից:¹³

Հետազոտության տվյալների վերլուծության համար օգտագործվել է [MAXQDA 18.02](#) ծրագիրը:

¹² Տես մանրամասները Հավելված 1

¹³ Տես մանրամասները Հավելված 2 և 3

4. Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց հիմնախնդիրները

4.1 Գործազրկություն և տնտեսական հնարավորությունների բացակայություն

Ֆոկուս խմբերի մասնակիցների մեծամասնությունը երիտասարդների շրջանում ամենասուր խնդիրն է համարում գործազրկությունը, որի արդյունքում մեծանում է արտագաղթը. խորանում են ֆինանսական անկայունությունը և անհատի ինքնուրույնության հարցերի հետ կապված խնդիրները: Դրա հետ մեկտեղ, տնտեսական հնարավորությունների բացակայությունը խոչընդոտում է անձնական զարգացմանը և անդրադառնում մոտիվացիայի, ինքնագնահատականի և անհատի կայացման վրա:

«Լինել գործազուրկ նշանակում է ոչ միայն չունենալ վճարվող աշխատանք, այլև չունենալ տարատեսակ մտածելակերպով և տեսակետներով մարդկանց հետ աշխատելու հնարավորություն» /տղամարդ, 28տ, Շիրակ, գյուղական համայնք:

Համաձայն տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված բազմաթիվ հետազոտությունների՝ գործազրկությունը համարվում է ՀՀ բնակչության թիվ մեկ խնդիր: Սպորտի և երիտասարդության նախարարության և ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամի կողմից 2012-ին իրականացված քանակական [հետազոտության](#) արդյունքների համաձայն՝ երիտասարդության ամենամեծ խնդիրներն են գործազրկությունը (81.5%), ցածր աշխատավարձը (47.4%) և բնակարանային ապահովման հարցը (35.8%): Չլուծված հակամարտությունները հարևան երկրների հետ որպես կարևորագույն խնդիր նշել են հարցվածների միայն 1.4%-ը, իսկ այլ կարևոր խնդիրների թվում երիտասարդները նշել են կրթության հասանելիությունն ու որակը, երիտասարդներին պետական աջակցության բացակայությունը, առողջական խնդիրներն ու թմրանյութերից կախվածությունը:¹⁴

Կովկասյան բարոմետրի վերջին [տվյալները](#) (2017) հաստատում են, որ համաձայն երիտասարդների (18-35 տարեկան), Հայաստանի առջև ծառայած երեք գլխավոր խնդիրներն են գործազրկությունը, աղքատությունը և կոռուպցիան:¹⁵ Հարցված 18-35 տարեկան տղամարդկանց 44%-ը և կանանց 68%-ը [հաստատում են](#), որ նրանք «երբևէ աշխատանք չեն ունեցել»:¹⁶

Միջազգային հանրապետական ինստիտուտի վերջին հետազոտության համաձայն (2018)՝ ՀՀ քաղաքացիների 23%-ը կարևորագույն 3 խնդիրների թվում նշում է դարաբաղյան չլուծված հակամարտությունը:¹⁷

4.2 Որակյալ կրթության հնարավորությունների բացակայությունը

¹⁴ National Youth Aspirations Research Report, MSY and UNDP Armenia, 2012, էջ. 76

¹⁵ Caucasus Barometer 2017, Armenia. <https://caucasusbarometer.org/en/cb2017am/IMPIS1-by-AGEGROUP-withoutdkra/>

¹⁶ Ibid: <https://caucasusbarometer.org/en/cb2017am/HAVEJOB-by-RESPSEX-withoutdkra/>

¹⁷ Public Opinion Survey: “Residents of Armenia”, July 23–August 15, 2018, Center for Insights in Survey Research, A Project of the International Republican Institute, p. 30

Ֆոկուս խմբերի մասնակիցների կողմից նշված հաջորդ կարևոր խնդիրն է որակյալ կրթական հնարավորությունների բացակայությունը: Հարցվածների մեծամասնությունը դժգոհություն է արտահայտում բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության որակի վերաբերյալ: Մասնակիցները նաև նշում են, որ ֆորմալ կրթության և առկա աշխատատեղերի պահանջների միջև առկա է անջրպետ:

Գործատուների կարծիքով ևս կրթության բացակայությունն ակնհայտ է.

«Չնայած նրան, որ մեր տեղական ԲՈՒՀ-ը ունի իրավագիտության ֆակուլտետ և բազմաթիվ շրջանավարտներ, արդեն բավականին երկար ժամանակ է չենք կարողանում մեր կազմակերպությունում առկա իրավաբանի հաստիքը համալրել, քանի որ շրջանավարտների մասնագիտական կարողությունները չեն համապատասխանում» Ալին, շոտ, քաղաքային համայնք, Սյունիք:

«Երիտասարդները չգիտեն, թե ինչ կլինի 10 տարի հետո, հետևաբար չգիտեն, թե ինչպես ընտրել մասնագիտություն: Ընդհանուր առմամբ, հայաստանում մենք ունենք պլանավորման խնդիր և կարծաժամկետ մտածողություն: Իմ կարծիքով մեր իշխանություններն էլ չգիտեն, թե ինչ հայաստան ենք մենք ուզում տեսնել 10 տարի հետո» Երիտասարդական աշխատանքի փորձագետ, Գյումրի:

Կրթական համակարգի բազմաթիվ թերությունների թվում երիտասարդները մասնավորապես շեշտում են լեզուների թույլ ուսուցանումը, հատկապես գյուղական համայնքներում: Անգլերենի իմացության բացակայության պատճառով բազմաթիվ երիտասարդներ զրկվում են բազմաթիվ ոչ ֆորմալ կրթական ծրագրերին մասնակցելուց: Հարևան քաղաքային համայնքներում դասերի հաճախելը պահանջում է ֆինանսական աջակցություն և տրանսպորտային համակարգ, որը հասանելի չէ բազմաթիվ գյուղական համայնքներում:

4.3 Մարզերի անհամաչափ զարգացում

Երիտասարդների և նրանց ներուժի զարգացման ճանապարհին մեկ այլ խոչընդոտ է հանդիսանում մարզերի անհամաչափ զարգացումը: Եթե համեմատենք գյուղական համայնքները քաղաքային համայնքների հետ կամ մայրաքաղաքն այլ քաղաքների հետ, ապա կտեսնենք, որ ենթակառուցվածքների թերի զարգացումն ակնհայտ է:

Ընդհանուր առմամբ, ծառայությունների բացակայությունը մեծ խնդիր է գյուղական համայնքների երիտասարդների համար: Երիտասարդները շեշտում են, որ Տավուշի ու Շիրակի սահմանամերձ համայնքներն անտեսված են և ներդրումներ այնտեղ չեն կատարվում:

«Մարզերում և հատկապես գյուղերում ապրող երիտասարդներն ունեն խիստ սահմանափակ կրթական, ինչպես նաև տարբեր միջոցառումներին/նախագծերին/դասընթացներին մասնակցելու հնարավորություններ» Երիտասարդական աշխատանքի փորձագետ,

երևան/:

4.4 Սոցիալական ինտեգրման հնարավորությունների բացակայություն

Ժամանցի վայրերի բացակայությունը մեկ այլ խնդիր է: Որպես կանոն ԲՈՒՅ-երը դառնում են երիտասարդների հիմնական ձեռք ոչ միակ/ հավաքատեղի: Ֆոկուս խմբի մասնակիցներից մեկը, որը ներկայացնում էր Տավուշի սահմանամերձ համայնքներից մեկը, շեշտում է գյուղական համայնքներում երիտասարդական կենտրոնների անհրաժեշտությունը.

«Նման կենտրոնները ոչ միայն երիտասարդների մոբիլիզացիայի հարթակ են, այլև հանդիպելու, համայնքի խնդիրները քննարկելու և իրենց ձայնը և կարծիքը լսելի դարձնելու վայր» (25 տարեկան կին, Տավուշ):

«Ես կցանկանայի ծանոթանալ տարբեր տեսակի մարդկանց հետ: Որքան շատ եմ շփվում մարդկանց հետ, որոնք ճամփորդելու հնարավորություն չեն ունեցել, այնքան շատ եմ համոզվում, որ նրանք ունեն հիանալի գաղափարներ, որոնք բարձրաձայնելու կամ իրագործելու հնարավորություն չեն ունեցել, դրանք պարզապես չեն լսվել: Մեզ պետք են երիտասարդական հարթակներ, որտեղ տարատեսակ փորձառություն ունեցող մարդիկ կկարողանան հավաքվել և բացահայտել միմյանց» (23 տարեկան տղամարդ, Ծիրակ):

4.5 Անտարբերություն և մոտիվացիայի բացակայություն

Անտարբերությունը սերտորեն կապված է վերնում նշված կրթական խնդիրների հետ.

«Ծատ քչերն են ցանկանում որևէ բան անել, և այդ քչերը շատ զբաղված են դառնում: Կարծես թե կա երիտասարդության մի փոքր հատված, որն արել է ամեն բան՝ հմուտ և կրթված լինելու համար: Նրանք ակտիվ են, մարդիկ ճանաչում են նրանց, միևնույնը մնացածը շատ իներտ են» (կին, 27 տարեկան, Տավուշի քաղաքային համայնք):

Սպորտի և երիտասարդության նախկին նախարարության ներկայացուցչի կարծիքով երիտասարդության առաջնային խնդիրը «նախաձեռնող լինելու, ինքնագարգանալու և ինքնակրթության հանդեպ անտարբերությունն է»: Բոլոր երեք մարզերում ֆոկուս խմբերի մասնակիցները նշել են անտարբերության հետևյալ պատճառները՝ ցածր ինքնագնահատական, թերահավատություն փոփոխությունների նկատմամբ, հիասթափություն և թերահավատություն իրենց ձայների լսելիության հանդեպ:

«Ցածր մոտիվացիայի պատճառը ցածր ինքնագնահատականն է: Եթե նրանք երիտասարդները՝ անձամբ հրավիրված չեն որևէ միջոցառման

կամ դասընթացի, ապա կարծում են, որ այն իրենց համար չէ և նեղություն չեն քաշում հայտադիմում լրացնելու համար» Այն, 29 տարեկան, Սյունիք, քաղաքային համայնք:

Ֆոկուս խմբերի մասնակիցներից և փորձագետներից ոմանց կարծիքով անտարբերության և պասիվության պատճառները կարող են թաքնված լինել մշակույթի մեջ, նաև փոխառված լինել ծնողներից, որոնք ծնվել և մեծացել են Խորհրդային Միության օրոք, երբ քաղաքացիական ակտիվիզմ գոյություն չուներ: Մյուս կողմից, բոլոր երեք մարզերում ֆոկուս խմբերի մասնակիցները համաձայնում են, որ *«հեղափոխությունը տեղի է ունեցել երկրում, բայց ոչ մարդկանց ուղեղներում»:*

«Ես կարծում եմ, որ ամեն ինչ կախված է անհատից, բայց անհատներին անհրաժեշտ է պարարտ միջավայր, իսկ համալսարանները չեն կատարում այդ գործառույթը» Առդամարդ, Շիրակ, քաղաքային համայնք:

Ըստ հարցված պատգամավորներից մեկի.

«Մենք հավատացած ենք, որ անհատի բարեփոխումը հասարակության բարեփոխման հիմքն է, ինչը կարող է խթանել փոփոխություններ»:

4.6 Արտագաղթ

Երիտասարդները շեշտում են նաև ժամանակավոր կամ մշտական արտագաղթի խնդիրը: Ըստ Կովկասյան բարոմետրի 2017թ-ի տվյալների [մշտական արտագաղթով](https://caucasusbarometer.org/en/cb2017am/EMIGRAT-by-AGEGROUP-withoutdkra/) հետաքրքրված է երիտասարդների 46%-ը,¹⁸ իսկ [ժամանակավոր արտագաղթով](https://caucasusbarometer.org/en/cb2017am/MIGSHRT-by-AGEGROUP-withoutdkra/)՝ 72%-ը:¹⁹

«Երիտասարդները, հատկապես գյուղերում, չեն տեսնում իրենց ապագան իրենց ծննդավայրում, քանի որ չեն տեսնում իրենց ներուժի բացահայտման հնարավորություններ» Երիտասարդական աշխատանքի փորձագետ, Գյումրի:

Որպես կանոն արտագաղթի են դիմում երիտասարդ տղամարդիկ: Նրանք մեկնում են Ռուսաստան՝ ավելի լավ աշխատանք հիմնականում որպես ֆիզիկական աշխատուժի գտնելու նպատակով, փոխանակ անցնելու մասնագիտական զարգացման ծրագրեր և հետագայում ավելի լավ աշխատանք գտնել: Դրանից բացի, երիտասարդ տղամարդիկ սովորաբար արտագնա աշխատանքի են մեկնում երկամյա պարտադիր զինվորական ծառայությունից հետո, որը խոչընդոտ է հանդիսանում նրանց բուհական կրթության համար:

4.7 Զլուծված հակամարտությունները հարևան պետությունների հետ

Սպորտի և երիտասարդության նախարարության ուսումնասիրության համաձայն՝ չլուծված հակամարտությունները մտահոգում են երիտասարդների

¹⁸ <https://caucasusbarometer.org/en/cb2017am/EMIGRAT-by-AGEGROUP-withoutdkra/>

¹⁹ <https://caucasusbarometer.org/en/cb2017am/MIGSHRT-by-AGEGROUP-withoutdkra/>

միայն 1,4%-ին: Այնուամենայնիվ, դա, թերևս, ամենալուրջ խնդիրն է Հայաստանի և, մասնավորապես, երիտասարդների համար: Այսպիսով՝ 2016 թվականի արդյունքի «քառօրյա պատերազմի» ընթացքում, որը 1994 թվականի զինադադարից ի վեր հակամարտության ամենամեծ էսկալացիան էր, ՀՀ [պաշտոնական աղբյուրների](#) համաձայն գոհվել է 64 զինծառայող, 15 կամավոր և 4 քաղաքացիական անձ.²⁰ 2016-ից ի վեր, և հատկապես 2018-ի իրադարձություններից հետո, Ադրբեջանի հետ սահմանին իրավիճակը համեմատաբար հանգիստ է, ինչի արդյունքում կրճատվել է միջադեպերի և զոհերի թիվը: Այնուամենայնիվ, թե՛ առնաձին միջադեպերի, և թե՛ լայնամասշտաբ գործողությունների վտանգը՝ մնում է իրական: Հարկ է սակայն նշել, որ ֆոկլուս խմբերը և փորձագիտական հարցազրույցները նույնպես հաստատում են նախկինում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ չլուծված հակամարտությունների վերաբերյալ երիտասարդության մտահոգվածության մակարդակի մասին:

5. Երիտասարդների շրջանում քաղաքական և քաղաքացիական ակտիվիզմը «թավշյա հեղափոխությունից» առաջ

5.1 Երիտասարդների կարիերայի ընտրության ուղիները

2018-ի քաղաքական փոփոխություններից առաջ երիտասարդները հիմնականում երկու ուղի ունեին երկրի քաղաքական և հասարակական կյանքում մասնակցության համար: Դրանցից մեկն այսպես կոչված «պաշտոնական ուղին» էր, որն անցնում էր պաշտոնական ճանապարհով, օրինակ՝ քաղաքական կուսակցությունների, իսկ ավելի կոնկրետ՝ Հանրապետական կուսակցության երիտասարդական կազմակերպության միջով: Մյուս ճանապարհը կարելի է անվանել «ակտիվիստական» կամ «այայբարի» ճանապարհ: «Պաշտոնական ուղին» հիմնականում ներառում էր քաղաքական սանդուղքով առաջխաղացման երկու արահետ՝ կուսակցության երիտասարդական կազմակերպության կամ այսպես կոչված «ուսանողական խորհուրդների» միջոցով: Դրանք սովորաբար կոչված են նպաստելու ուսանողների ինքնակազմակերպումը, սակայն հետխորհրդային երկրներում դրանք, որպես կանոն, վերահսկվում են բուհական ղեկավարության և իշխանությունների կողմից: Քաղաքական սոցիալիզացիայի երկրորդ ճանապարհն անցնում էր քաղաքական և քաղաքացիական բողոքների միջով, ինչը խոստումնալից չէր կարիերայի կառուցման տեսանկյունից, սակայն ունենում էր որոշակի ազդեցություն քաղաքական բանավեճի օրակարգի հաստատման վրա:

1990-ական թվականներից ի վեր «պաշտոնական» ուղին կարծես թե ամենաարդյունավետն էր երիտասարդների կարիերայի հեռանկարների տեսանկյունից: Իշխող Հանրապետական կուսակցության որոշ անդամներ սկսել էին իրենց գործունեությունն իբրև կուսակցության երիտասարդական կազմակերպության ակտիվիստներ: Չնայած դրան կարիերայի այս ուղին բավական դանդաղ էր ընթանում, երիտասարդական կազմակերպության որոշ

²⁰ Reference (report) about the losses between April 2-5 – RA Ministry of Defense, <https://razminfo.wordpress.com/2016/04/14/reference-report-about-the-losses-between-april-2-5-ra-ministry-of-defense/>

ներկայացուցիչներ այդպես էլ մտում էին «երիտասարդի» դերում, այնինչ նրանց տարիքը չպետք է որ թույլ տար նրանց զբաղեցնել այդ դերը:²¹

Դրան հակառակ, «ակտիվիստի» ուղին պետական համակարգում պաշտոն ստանձնելու որևէ հնարավորություն գրեթե չէր ընձեռում: Փոխարենն այն ստեղծում էր երիտասարդական քաղաքականության մեջ որոշակի խնդիրներ և պահանջներ բարձրաձայնելու հնարավորություններ՝ այդպիսով որոշակի ազդեցություն ունենալով հանրային քաղաքականության վրա: Սակայն 2018թ-ի իրադարձություններից հետո «ակտիվիստի» ուղին դարձավ նաև ավելի արդյունավետ պետական համակարգում աշխատանք գտնելու առումով. «թավշյա հեղափոխությունից» հետո բազմաթիվ երիտասարդ ակտիվիստներ պաշտոններ ստացան գործադիր և օրենսդիր մարմիններում:

5.2 Երիտասարդների մասնակցությունը բողոքի շարժումներին

2018թ-ի գարնանը տեղի ունեցած իրադարձություններին երիտասարդների նման ակտիվ մասնակցությունը Հայաստանում զարմացրեց շատերին: 2016թ-ին իրականացվել էր մի հետազոտություն «Անկախության սերունդ» վերնագրով, որի համաձայն Հայաստանում երիտասարդները հանրային կյանքում ցուցաբերում էին անորոշ վարքագիծ: Հետազոտությունը ցույց էր տալիս, որ երիտասարդներին հատուկ է մեկուսացման որոշակի ինքնազնահատական, որի արդյունքում նրանք խուսափում են քաղաքական գործընթացներից.²² Այլ կերպ ասած՝ երիտասարդների վարքագիծը ձևավորվում էր ոչ թե քաղաքական ինստիտուցիոնալ մեխանիզմների հետ կապերի շնորհիվ, այլ սոցիալական հոգեբանության, սոցիալական կապերի և անձնական ընկալումների ազդեցության ներքո:

Չնայած նրան, որ այս հետազոտությունը եզրակացնում է, որ Հայաստանի երիտասարդներին հատուկ է քաղաքական պասիվ վարքագիծ, քաղաքական փոփոխություններից առաջ ևս եղել են դեպքեր, երբ երիտասարդները ակտիվորեն մասնակցել են քաղաքական և սոցիալական ընդվզումներին: Նման քաղաքացիական նախաձեռնությունների օրինակներ են «Սկսել ա» երիտասարդական նախաձեռնությունը, «Մաշտոցի պուրակը», «100 դրամ» շարժումը՝ տրանսպորտի թանկացման դեմ, «Դեմ.եմ» շարժումը՝ կենսաթոշակային ռեֆորմի դեմ, «Էլեկտրիկ Երևանը»՝ Էլեկտրականության գների թանկացման դեմ և այլն: Երիտասարդությունը նաև զգալիորեն ներկայացված էր քաղաքական շարժումներում, ինչպիսիք էին 2008 և 2013 թվականների հետընտրական բողոքները կամ 2016թ-ի «Սասնա ծռերի» գործողությունների հետ կապված դեպքերը:

²¹ Հանրապետական կուսակցության պատգամավոր Կարեն Ավագյանը, ծնված 1974թ-ին, ով հանդիսանում էր Երևանի բժշկական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահը 2003-2005թթ., Հանրապետական կուսակցությունում տարիներ շարունակ զբաղվում էր երիտասարդական հարցերով, իսկ 2010թ-ին դարձավ ՀՀ երիտասարդական ֆեդերացիայի համակարգողը՝ այդ կարգավիճակում մնալով մինչև 2018թ-ը: Դրանից հետո, երիտասարդական ֆեդերացիայի գործունեության շուրջ քրեական գործ հարուցվեց՝ հափշտակության հոդվածով:

²² Independence Generation, Youth Study 2016 Armenia, <http://library.fes.de/pdf-files/bueros/georgien/13149.pdf>

Քաղաքական շարժումներում ևս առկա էր մեծ թվով երիտասարդների ներգրավվածություն. որոնք աջակցում էին ընդդիմադիր քաղաքական գործիչներին և Նյու Կասթրոյի քննադատում էին իշխանություններին: 2008-ի հետընտրական բողոքի ցույցերի ընթացքում ի հայտ եկան ընդդիմադիր ուժերին համակրող բազմաթիվ երիտասարդներ, ինչի արդյունքում ձևավորվեց «Հիմա» երիտասարդական կազմակերպությունը, որին անդամակցեցին հարյուրավոր երիտասարդ ակտիվիստներ՝ ձևավորելով այսպես կոչված «Ժողովրդական շարժման» երիտասարդական թևը:

Բողոքի այս ալիքը սկսվեց 2008թ-ի փետրվարի 19-ի նախագահական ընտրություններից հետո: Ցույցերի մեծ մասը տեղի էր ունենում մայրաքաղաք Երևանում և կազմակերպված էր ընդդիմադիր թեկնածու և ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի աջակիցների կողմից: Տեր-Պետրոսյանի ամենաեռանդուն աջակիցներից էր «Թավշյա հեղափոխության» ապագա առաջնորդ Նիկոլ Փաշինյանը, ով այդ ժամանակ 33 տարեկան էր:

Երիտասարդության լայն մասնակցությամբ քաղաքական շարժումները չսահմանափակվեցին 2008-ի հետընտրական գործընթացներով: 2011թ-ին, թերևս «Արաբական գարնան» ազդեցության տակ, Տեր-Պետրոսյանի աջակիցները բարձրացրեցին բողոքի ևս մի ալիք, որը սակայն չհասավ հաջողության, և Սերժ Սարգսյանն այդ ժամանակ կարողացավ պահպանել իշխանությունը:

Մեկ այլ բողոքի ալիք բարձրացավ 2013-ին այն բանից հետո, երբ ընդդիմադիր թեկնածու Րաֆֆի Հովհաննիսյանը նախագահական ընտրություններում պարտվեց Սերժ Սարգսյանին: Ծարժումը պատմության մեջ մտավ «Բարևահեղափոխություն» անվան տակ՝ հղվելով Րաֆֆի Հովհաննիսյանի նախընտրական արշավի ընթացքում մարդկանց մոտենալու և բարևելու սովորությանը: Րաֆֆի Հովհաննիսյանը Երևանի փողոցներում հավաքեց հազարավոր աջակիցների, և տեղի ունեցան բախումներ ոստիկանության հետ, ինչից հետո ալիքը աստիճանաբար մարեց: «Բարևահեղափոխությանը» հետևեցին այլ քաղաքական շարժումներ, որոնք այդչափ մեծ չէին, բայց կրկին առանձնանում էին երիտասարդների ակտիվ մասնակցությամբ:

Եվ վերջապես, 2018թ-ի իրադարձություններին նախորդեց ևս մեկ շարժում, որին նույնպես մասնակցեցին մեծ թվով երիտասարդներ: Խոսքը 2016-ի «Սասնա ծռերի» դեպքերի մասին է, երբ զինված մարդկանց մի խումբ, որն իրեն անվանում էր «Սասնա ծռեր», գրավեց ոստիկանական բաժանմունքներից մեկը՝ սպանելով երկու ոստիկան և պատանդ վերցնելով ևս մի քանիսին: «Սասնա ծռերի» բռնի գործողություններին հետևեց խաղաղ ցույցերի շարք, որոնց ակտիվորեն մասնակցեցին երիտասարդները:

Այսպիսով, դիտարկելով իշխանափոխությանը նախորդող շարժումները կարող ենք առանձնացնել հստակ քաղաքական օրակարգ ունեցող շարժումները քաղաքացիական, ապաքաղաքական կամ առնվազն ապակուսակցական շարժումներից: Երիտասարդության մասնակցության տեսանկյունից առկա է հստակ տարբերություն շարժումների վերոնշված երկու տեսակների միջև. քաղաքացիական շարժումներում երիտասարդությունը գերակշռում էր թե՛ առաջնորդների, և թե՛ մասնակիցների առումով, մինչդեռ քաղաքական շարժումները առաջնորդվում էին ավագ սերնդի գործիչների կողմից:

Քաղաքացիական նախաձեռնություններում գերիշխում էին երիտասարդները, սակայն այդ շարժումները իրենց ազդեցության մակարդակով զիջում էին քաղաքական շարժումներին: Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ քաղաքացիական շարժումներն ավելի հաջողված էին՝ ի տարբերություն քաղաքականների, որոնք, որպես կանոն, ձախողվում էին: Սա կարելի է բացատրել նրանով, որ քաղաքացիական շարժումների բարձրացրած պահանջներն ավելի սահմանափակ էին և իշխանության կողմից չէին ընկալվում որպես մեծ վտանգ պարունակող շարժումներ: Ինչևիցե, թե՛ քաղաքացիական, և թե՛ քաղաքական շարժումները որոշիչ դեր խաղացին երիտասարդներին քաղաքական ոլորտ ներգրավելու գործում, ինչի արդյունքում քաղաքական ասպարեզ եկան և քաղաքական ու քաղաքացիական առջնորդական դիրքեր գրավեցին բազմաթիվ երիտասարդներ:

6. Երիտասարդների մասնակցությունը «Թավշյա հեղափոխությանը»

6.1 Երիտասարդական \$որմալ և ոչ \$որմալ խմբերը

Քաղաքացիական հասարակության կազմակերպված խմբերը և ակտիվիստական նախաձեռնությունները, ինչպիսիք էին «Իմ քայլը», «Մերժիր Սերժին»-ը և «Ռեստարտը», ընդդիմադիր շարժման առանցքում էին: Այս խմբերն առավել ակտիվ էին շարժման սկզբում, երբ քչերն էին ակնկալում մեծ արդյունքներ: Որոշ առումներով, այս խմբերը նման էին նախորդ ժամանակաշրջանի նախաձեռնություններին, որի անդամները քաղաքային համայնքների միջին խավի երիտասարդներ էին: Սակայն շարժման հզորացմանը զուգահեռ ավելի ու ավելի շատ սոցիալական խմբեր միացան՝ ներառելով նոր երիտասարդական խմբեր:

2018թ-ի շարժման երիտասարդների մասնակցության բաղկացուցիչ մասն էին ուսանողները: Ուշագրավ է, մասնավորապես, ուսանողների մասնակցությունը ցույցերին և դասադուլները, որտեղ կարևոր դեր էր խաղում «Ռեստարտ» նախաձեռնությունը: «Ռեստարտը» չդադարեցրեց իր ակտիվությունը շարժման հաջողությունից հետո, դրա անդամները շարունակեցին ակտիվորեն մասնակցել գործընթացներին 2018թ-ի ապրիլից հետո, երբ նախաձեռնվեցին հանրային քննարկումներ ու լսումներ: Որոշ երիտասարդներ, այնուամենայնիվ, գերադասեցին շարունակել «փողոցային» պայքարը, իսկ ուսանողները վերադարձան դասասենյակներ՝ քննարկելու և քաղաքական օրակարգ մտցնելու իրենց հուզող հարցերը:

Քաղաքական վերլուծաբանների կարծիքով, Փաշինյանի թիմում երիտասարդների ներկայությունը հատկապես կարևոր էր «հեղափոխական» գործողությունների ուրվագծման և ոչ ստանդարտ միջոցների կիրառման առումով: Շարժումը գործի դրեց մարտավարություններ, որոնք ներառում էին շարժական ցույցեր և երթեր, ինչը խոչընդոտում էր ոստիկանական գործողությունների կիրառմանը, քանի որ ցուցարարները ոստիկանական բռնությունից խուսափելու նպատակով հաճախ անհետանում էին մի տարածքից և նորից հայտնվում մեկ այլ տարածքում: Նրանք կիրառում էին նաև փողոցներ փակելու մարտավարությունը՝ մեքենաները կամ հետիոտները փակում էին ճանապարհները կամ դիտավորյալ դանդաղ էին հատում փողոցները՝

առաջացնելով խցանումներ և, միաժամանակ, ֆորմալ առումով չխախտելով հասարակական կարգը: Այս մարտավարությունները թույլ էին տալիս խուսափել բախումներից և ներգրավել ավելի մեծ թվով մարդկանց, քան եթե բողոքը և դիմադրությունը լինեին բռնի:

6.2 Ֆոկուս խմբերի երիտասարդների մոտեցումները

Ըստ ֆոկուս խմբերի երիտասարդ մասնակիցների՝ վերջին տարիներին երիտասարդության ոչ բոլոր սոցիալական խմբերն են ցուցաբերել հավասար ակտիվություն: Այնուամենայնիվ, 2018-ի իշխանափոխությունը ցույց տվեց, որ այս դիտարկումը սխալ է, քանի որ տարբեր սոցիալական շերտերին պատկանող երիտասարդները մասնակցեցին խաղաղ բողոքներին և հետագա քաղաքական գործընթացներին:

Ֆոկուս խմբերի մասնակիցների մեծամասությունը մասնակցել էր 2018-ի ցույցերին: Ուշագրավ է, որ մասնակիցների մեծ մասը խոստովանեց, որ շարժման սկզբի օրերին հետևում էին երևանում ծավալվող իրադարձություններին ինտերնետային ուղիղ եթերների միջոցով: Միայն որոշ ժամանակ անց են նրանք միացել ցույցերին իրենց համայնքներում կամ գալով Երևան:

Ցույցերին մասնակցելու ցանկության հետ կապված մասնակիցները նշեցին մի քանի հանգամանք, որոնք կապված են **սոցիալ-տնտեսական** և **բարոյա-հոգեբանական** գործոնների հետ: Երիտասարդների կարծիքով, ցույցերը միակ միջոցն էին արտահայտելու դժգոհությունն ու անվստահությունը ռեժիմի հանդեպ: Գրեթե բոլոր մասնակիցները նկարագրում էին 2018թ-ի իրադարձությունները իբրև մի պոռթկում, «Էմոցիաների ժայթքում՝ տասնամյակների անարդարությունից և աղքատությունից հետո»:

«Մեր ծնողների սերնդի պատկերը մեր աչքերի առաջ էր, նրանք տասնամյակներով ապրում էին հույսով և հավանաբար արդեն հարմարվել էին և չէին հավատում, որ հեղափոխությունը տեղի կունենա, իսկ երիտասարդները հավատացին, որ կարող են դա անել» ՝ տարեկան, կին, Շիրակ, քաղաքային համայնք:

Բոլոր մարզերում մասնակիցները նշում էին, որ որքան մեծանում և ավելի համախմբված էին դառնում ցույցերը, այնքան աճում էր փոփոխությունների հույսն ու նոր սկզբի ակնկալիքը: Փոփոխության հիմնական մոտիվացիան «կոռումպացված հարուստների իշխանությունից ազատվելն էր և հասարակությունում ապահով միջավայր ստեղծելը»: Աժ հարցված պատգամավորներից մեկի կարծիքով մարդկանց գիտակցության մեջ շարժման խթան հանդիսացավ «*սոցիալական տեղաշարժի բացակայությունը, և սոցիալական սանդուղքով բարձրանալու հնարավորության բացակայությունը, որը ստիպում էր շատերին լքել երկիրը*»:

Փոքր համայնքներում, որտեղ **բոլորն իրար ճանաչում են**, ավելի բարդ էր մասնակցել շարժմանը: Ճատ երիտասարդներ որոշում էին տեղափոխվել Երևան՝ ցույցերին ավելի անվտանգ կերպով մասնակցելու նպատակով: Հատկապես դժվար էր պետական համակարգում աշխատող մարդկանց, քանի որ նրանց կարող էին ճանաչել և գրկել աշխատանքից: Այն մարդիկ, որոնք շարժմանը միացան ամենասկզբում կորցնելու ոչինչ չունեին: Գյումրիում ֆոկուս խմբի

մասնակիցներից մեկը, ով 18 տարեկան դպրոցի աշակերտ էր, պատմում էր, թե ինչպես էին նրանք փորձում համոզել իրենց ուսուցչին մասնակցել ցույցերին.

«Եթե դուք չեք մասնակցում ցույցերին՝ վախենալով կորցնել ձեր աշխատանքը, ապա մենք մեծանալու ենք առանց աշխատանքը կորցնելու վախի, քանի որ ընդհանրապես աշխատանք չենք ունենալու»:

Ճիրակի երիտասարդների կարծիքով՝ ավագ սերունդը ավելի շատ էր վախենում և կասկածում, բայց երբ պարզ դարձավ, որ հետդարձի ճանապարհ չկա, նրանք սկսեցին մասնակցել երիտասարդների միջոցով՝ աջակցելով նրանց և միջնորդավորված մասնակցություն ցուցաբերելով:

Էյֆորիայի ալիքի վրա մարդիկ սկսեցին հույս փայփայել, որ հեղափոխությունից հետո կստեղծվեն աշխատատեղեր: Մասնավորապես, Ճիրակում մասնակիցները ավելի շատ էին նշում մասնակցության սոցիալ-տնտեսական պատճառներ.

«Գյուլմրին միշտ եղել է «հեղափոխական» քաղաք: Նախկին իշխանությունները միշտ ցածր աջակցություն են ունեցել այստեղ, իսկ ընտրակեղծիքներ համեմատաբար քիչ էին արվում: Այդ պատճառով, այս ցույցերի ընթացքում մարդիկ զգացողություն ունեին, որ ավելի մոտ են նախկին իշխանությունից ազատվելուն: Սերժ Սարգսյանը այստեղ Գյուլմրի/եկել էր ընդամենը մի քանի անգամ, քանի որ այստեղի մարդկանց հետ շատ խոսելու բան չուներ: Այստեղ ակտիվիզմը տարիների ընթացքում կուտակված դժգոհության արդյունք էր» (23 տարեկան, կին, Ճիրակ, քաղաքային համայնք):

Ֆոկուս խմբերի այն սակավաթիվ մասնակիցները, որոնք չէին մասնակցել ցույցերին կամ պասիվ էին եղել, թերահավատորեն էին վերաբերվում ոչ թե հասարակության մեջ փոփոխություններին, այլ «ամբոխային մասնակցությանը».

«Ամեն անգամ, երբ տեսնում էի ցույցին մասնակցող դպրոցականներին, մտածում էի, որ այս հեղափոխությունը մեզ ոչ մի տեղ չի տանի, քանի որ այն իրականացնող մարդիկ կամ չեն հասկանում, թե ինչ են անում, կամ պարզապես զվարճանում են դասերից փախչելով» (18 տարեկան տղամարդ, Սյունիք, քաղաքային համայնք):

Ուրիշներն էլ նշում էին, որ իրենց մասնակցությանը խոչընդոտում էին ծնողները կամ ազգականները: Ոմանք ուղևորվել էին Երևան՝ ոստիկանական ճնշումից խուսափելու նպատակով: Տավուշում ցույցերին մասնակցած երիտասարդները նշում էին, որ ոստիկանները ճնշումներ էին գործադրում նրանց ծնողների վրա, հատկապես երիտասարդ կանանց ծնողների վրա, հարցնելով «արդյո՞ք գիտե՞ք, թե ձեր դուստրը/որդին ինչեր է անում»: Տավուշում մի քանի երիտասարդ կին ասում էին, որ իրենց ծնողները խոչընդոտում էին իրենց մասնակցությանը ասելով, որ ցույցերին մասնակցելը «հարգալից չէ»: Քաղաքացիական հասարակության ոլորտում փորձագետներից մեկը նշեց, որ քաղաքականությունը համարվում է «կեղտոտ» միջավայր, որը ավելի հարիր է տղամարդկանց:

Ամփոփելով կարող ենք ասել, որ քաղաքացիական անհնազանդության առաջին օրերին մասնակցած երիտասարդների թվի մասին չկան հստակ

տեղեկություններ: Այնուամենայնիվ, լրատվական աղբյուրների մեծամասնությունը նշում էր, որ Երևանի կենտրոնում ակցիաների մասնակիցների թիվը առաջին թօրվա ընթացքում հասավ 40.000-ի: Այս մարդկանց մեծամասնությունը երիտասարդներն էին: Իսկ ցույցերի կրիտիկական պահերին, ինչպիսիք էին ապրիլի 22-ը, ապրիլի 25-ը, մայիսի 1-ը և 2-ը, միայն Երևանում մասնակիցների թիվը, ամենայն հավանականությամբ, մոտ 150.000-250.000 էր: Ցույցերի մասնակիցների զգալի հատվածը երիտասարդներն էին: Դրանք կազմակերպվում էին Նան Գյումրիում, Վանաձորում և Հայաստանի հյուսիսի այլ քաղաքներում, իսկ երկրի այլ հատվածներում տեղի ունեցան ավելի փոքր ակցիաներ: Ընդհանուր առմամբ՝ երիտասարդների մասնակցությունը «Թավշյա հեղափոխության» հաջողության կարևորագույն բաղկացուցիչն էր:

7. Երիտասարդների մասնակցությունը հետհեղափոխական Հայաստանի Կառավարությունում ու Ազգային ժողովում

7.1 Քաղաքական մասնակցությունը

Երիտասարդների ներկայությունը Կառավարությունում և Ազգային ժողովում դարձել էր լայն հանրային քննարկման առարկա: Մասնավորապես, լրատվամիջոցները լուսաբանում էին հանրության մտահոգությունը նորընտիր իշխող կուսակցության շարքերում փորձառու քաղաքական գործիչների բացակայությամբ: Կառավարությանը [մեղադրում](#) էին «անլրջության» մեջ, չահարկելով այն փաստը, որ կառավարության անդամները չափազանց երիտասարդ են և հետևաբար չունեն երկիրը առաջնորդելու համար անհրաժեշտ կարողություններ:²³

Դրա հետ մեկտեղ, նոր կառավարության ներկայացուցիչները պնդում են, որ իրենց երիտասարդ լինելը իրենց առավելությունն է: Այսպես, Սփյուռքի նախարարության կայքը հպարտությամբ նշում էր, որ 2018թ-ի մայիսին նշանակված նախարարը [ամենաերիտասարդն նախարարն էր Եվրոպայում](#):²⁴

2018թ-ի ապրիլից հետո քաղաքականությունը դարձավ մարդկանց առօրյա կյանքի կարևոր մաս: Երիտասարդները առօրյայում հետևում են նորություններին և քննարկում քաղաքական իրադարձությունները.

«Մեր համայնքում բոլորը սկսեցին դիտել կառավարության շարաթական և ԱԺ նիստերի հեռարձակումները» Ալին, 20 տարեկան, Ճիրակ, գյուղական համայնք:

Երիտասարդները սկսեցին ավելի ակտիվորեն բարձրաձայնել իրենց խնդիրները: Այնուամենայնիվ, խնդիրների «ներքևից վերև» լուծումների որոնումը դեռևս անհրաժեշտ մակարդակի վրա չէ: Դրա փոխարեն, տարբեր մասշտաբի խնդիրների մասին բարձրաձայնելու հիմնական միջոցը առցանց հարթակներն են, հիմնականում Ֆեյսբուքը:

²³ <https://www.azatutyun.am/a/29959682.html>

²⁴ <http://hayernaysor.am/en/archives/290666>

Բոլոր մարզերում, բայց առավել շատ Սյունիքում և Շիրակում, \$ոկուս խմբերի մասնակիցները շեշտում են «բողոքելու և քննադատելու» մշակույթը հասարակության ստվար գանգվածի շրջանում, ներառյալ երիտասարդության: Ֆեյսբուքը և ժամանակակից հաղորդակցման այլ միջոցները մարդկանց՝ իրենց մտահոգություններով և խնդիրներով կիսվելու միակ հարթակներն են, այնուամենայնիվ, որպես կանոն, շատ ջանք չի գործադրվում առաջ գնալու և համապատասխան գործիչներից քաղաքականության մշակման մակարդակում փոփոխություններ պահանջելու ուղղությամբ:

«Իրական ակտիվիզմ չկա, մարդիկ չի նկատի է ունենում երիտասարդները՝ սիրում են միայն քննադատել, և սա ավելի ակնհայտ է դարձել հեղափոխությունից հետո» Աողամարդ, 24 տարեկան, Շիրակ, գյուղական համայնք:

Որոշ այլ մասնակիցներ համարում են, որ հասարակականության քաղաքականացվածությունը չափազանց բարձր է.

«Որքան շատ են մարդիկ հետաքրքրվում քաղաքականությամբ, այդքան մեծանում է բնեռացումը և աճում է ազդեցիկան, ինչը չի կարող առողջ լինել զարգացող հասարակության համար»:

Փորձագետներից ոմանք նույնպես համաձայն են, որ որքան ավելի քաղաքականապես ակտիվ են դառնում մարդիկ, այդքան ուժեղանում է բնեռացումը հասարակությունում:

\$ոկուս խմբերի և փորձագիտական հարցազրույցների արդյունքների համաձայն՝ երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման գործնաթյան կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝ «ներքևից վերև» և «վերևից ներքև»:
Ներքևից վերև մասնակցությունը այդչափ արդյունավետ չէ այն համայնքներում, որտեղ իշխում են ավագ սերնդի, հայրիշխանական մոտեցումներով տոգորված գործիչները, որոնց մոտեցումը երիտասարդությանը լավագույն դեպքում հանդուրժողական է: Այն համայնքներում, որտեղ ղեկավարներ են երիտասարդ և ակտիվ առաջնորդներ, երիտասարդական նախաձեռնություններն ավելի մեծ աջակցություն են ստանում:

Որքան պակաս խիստ է սուբորդինացիան իշխանության ներկայացուցիչների և բնակիչների միջը, այդքան ավելի բարձր մակարդակի համագործակցություն է գրանցվում նրանց միջև: \$ոկուս խմբերի մասնակիցները Տավուշի 4 տարբեր համայնքներից կիսվում էին երիտասարդության տեղական հասարակական կյանքում ներգրավվածության, ինչպես նաև Վրաստանի հետ միաջազգային ծրագրերին մասնակցելու հետ կապված տարբեր հաջողության պատմություններով և շեշտում համայնքի ղեկավարի կարևորագույն դերը՝ հատկապես գյուղական համայնքներում: Այն համայնքներում, որտեղ տեղական իշխանությունների կողմից տրամադրված աջակցությունը ցածր մակարդակի վրա է, երիտասարդները ավելի պասիվ են, իսկ «ներքևից վերև» մասնակցության մեխանիզմները չեն գործում:

«... մեր նոր իշխանությունը միշտ պետք է հիշի, որ յուրաքանչյուր հիասթափություն երիտասարդին իրավունք է տալիս լքել իր համայնքը/երկիրը» քաղաքացիական հասարակության փորձագետ, Գյումրի/:

Ավելի մեծ համայնքներում, որտեղ առկա են քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, երիտասարդները համայնքային մակարդակում մասնակցության ավելի մեծ հնարավորություններ ունեն: Գյումրիում, օրինակ [«UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և գորակցման ծրագիրը](#) (չնայած նրան, որ թիրախավորում է 12-18 տարեկաններին) դեռահասների վրա բավական մեծ ազդեցություն է ունեցել քաղաքացիական ոլորտում ներգրավվելու առումով: ²⁵ «Ներքևից վերև» արդյունավետ մասնակցության ազդեցության ճանապարհին մեկ այլ խոչընդոտ է երիտասարդների շրջանում նախաձեռնողականության և մոտիվացիայի բացակայությունը:

«Վերևից ներքև» մասնակցության հարթակները նույնպես զարգացած չեն: Մարզային իշխանություններին կից գործում են երիտասարդական խորհուրդներ, սակայն այս պահին դրանցից քչեր են ակտիվ: Այդ խորհուրդների ակտիվությունը կախված է դրա ղեկավարությունից և տեղական իշխանության ներկացուցիչներից: Անձերի փոփոխության դեպքում խորհրդի ակտիվությունը սկսում է իջնել: Երիտասարդական պետական քաղաքականության սառեցված լինելը, ինչպես նաև «վերևից ներքև» մասնակցային մեխանիզմների թերի զարգացումը մեծ խոչընդոտ են հանդիսանում երիտասարդների շրջանում որոշումների կայացման գործընթացին մասնացելու համար:

Չնայած նրան, որ վերջին մեկ տարվա ընթացքում մարդիկ ավելի ու ավելի են սկսել հետաքրքրվել քաղաքական գործընթացներով, ֆոկուս խմբերի մասնակիցների կարծով, **քաղաքական գիտակցությունը** չնչին չափով է աճել:

«Մարդիկ իրականում չեն հասկանում կամ տեղյակ չեն տարբեր ընտրովի պաշտոնների գործառույթների մասին, ինչպիսիք են մարզպետը, ավագանու անդամները, ԱԺ պատգամավորները: Նրանք դիտարկում են պաշտոնյաներին իբրև «խնդիրներ լուծողների», այդ պատճառով ընտրում են նրանց, ովքեր իրենց կարծիքով հետաքրքրված կլինեն լուծելու իրենց խնդիրները եթե դրա կարիքը լինի: Շատերը, այդ թվում երիտասարդները ընտրում են ընկերոջը, հարևանին և այլն, փոխարենը ընտրեն նրան, ով իրական փոփոխություն է առաջարկում» Նոդամարդ, 20 տարեկան, Ծիրակ, գյուղական համայնք/:

7.2 Ակնկալիքները նոր կառավարությունից և երիտասարդության ներդրումն ապագայում

Ֆոկուս խմբերի ընթացքում հարցված երիտասարդ կանայք և տղամարդիկ նշում են **կրթական համակարգի արմատական ռեֆորմի** անհրաժեշտությունը, համակարգ, որը կներառի դպրոցներում մասնագիտական կողմնորոշման դասընթացներ: Ըստ ֆոկուս խմբի Ծիրակի մարզի արական սեռի մասնակցի.

²⁵ Upshift Armenia: <https://vic.am/en/upshift-armenia/>

*«Կրթությունը պետք է լինի նոր իշխանությունների կարևորագույն առաջնահերթությունը: Եթե մենք ունենանք ավելի լավ կրթություն, մենք կունենանք ֆանտաստիկ երկիր, որտեղ բոլորը հարուստ կլինեն»
Ռոդամարո, ՋՅ տարեկան, Շիրակ:*

Աշխատատեղերի ավելի լայն հնարավորությունների ստեղծումը մեկ այլ առաջնահերթություն է: Բազմաթիվ երիտասարդներ նշում են հատկապես մարզերում նոր աշխատատեղերի ստեղծման անհրաժեշտությունը: Հատկանշական է, որ երիտասարդները նշում են խորհրդային տարիների օրինակով մարզերում արդյունաբերական գործարանների բացումը՝ որպես գործազրկության լուծում և տնտեսական զարգացման միջոց: Տավուշի մարզում երիտասարդները շեշտում են **սահմանամերձ համայնքներում** ներդրումներ կատարելու և գյուղատնտեսության զարգացման կարևորությունը: Շիրակում երիտասարդներն ակնկալում են, որ իշխանությունները **կստեղծեն երիտասարդական քաղաքականության զարգացման համար պատասխանատու կառույցներ**, օրինակ՝ երիտասարդներն առաջարկում են ստեղծել «Երիտասարդության հարցերի հանձնաժողով»: Ուրիշներն էլ ակնկալում են տեսնել **աշխատող պետական կառույցներ**, պրոֆեսիոնալ և կոմպետենտ որոշումներ կայացնողներ, որոնք պատասխանատու կլինեն ռեֆորմներ իրականացնելու համար: Եվ վերջին, սակայն ոչ պակաս կարևոր կետն այն է, որ «թավշյա հեղափոխությունից» հետո ակնկալվում է **օրենքի հավասար կիրառում** բոլորի նկատմամբ:

7.3 Երիտասարդների մասնակցության մտածելակերպի և գեղերային կողմը

Ընդհանուր առմամբ Հայաստանում մարդիկ թերահավատորեն են վերաբերվում երիտասարդներին՝ որոշումների կայացման ոլորտում: Գործադիր և օրենսդիր մարմիններին ուղղված քննադատության մի զգալի մասը վերաբերում է երիտասարդ «անփորձ» քաղաքական գործիչների ներկայությանը: Այս վերաբերմունքն արտահայտվում է ոչ միայն պետական պաշտոնյաների նկատմամբ, այլև տեղական համայնքային ակտիվիստների նկատմամբ, որոնք «մեղադրվում են» երիտասարդ և անփորձ լինելու մեջ: Աժ երիտասարդ կին պատգամավորներից մեկի կարծիքով՝

«Երիտասարդները քաղաքականությամբ զբաղվելու ավելի քիչ հնարավորություններ ունեն, միշտ տրվում է այն հարցը թե արդյո՞ք այս երեխաները պետք է որոշեն, թե մենք ինչպես ապրենք»:

Մեկ այլ փորձագետ նշում է, որ կանայք ավելի «ընդունելի են» քաղաքացիական ակտիվիզմի մեջ քան քաղաքական ոլորտում: Սա հատկապես վերաբերում է մարզերին, որտեղ պահպանողական արժեքները և հայրիշախանական համակարգը ավելի ընդունված է: Այս հանգամանքը, որպես կանոն, բացասաբար է անդրադառնում կանանց տրամադրվածության վրա, ինչի արդյունքում նրանք երբեմն նույնիսկ չեն ունենում բավականաչափ ինքնավստահություն նոր աշխատանքի անցնելու համար: Երիտասարդական աշխատանքի ոլորտում փորձագետներից մեկի խոսքով.

«Կանայք ավելի ցածր ինքնագնահատական ունեն քան տղամարդիկ, որոնք, ի հակառակ կանանց, անհիմն ինքնավստահությամբ են աչքի ընկնում: Օրինակ, երբ մենք աշխատանքի հայտարարություն ենք տեղադրում համապատասխանության ութ չափանիշով, այն տղամարդիկ, ովքեր համապատասխանում են չափանիշներից երկուսին համարում են, որ կարող են դիմել: Ավելին, նրանք հավատացած են, որ աշխատանքը ստանալու բարձր շանսեր ունեն: Մինչդեռ կանայք, որոնք համապատասխանում են ութից յոթ չափանիշին որոշում են չդիմել՝ համոզված լինելով, որ նրանք բավականաչափ որակավորված չեն: Այդ միտքը, որ նրանք բավականաչափ լավը չեն ուղեցկում է կանանց իրենց ծնվելու օրվանից, քանի որ եթե նրանք բավականաչափ լավը լինեին, նրանք տղա կծնվեին»:

Կանանց ներգրավվածությունը քաղաքականության մեջ, այնուամենայնիվ, աճել է գեղեցիկորեն քվոտայի շնորհիվ: Երիտասարդ կանայք այսօր ավելի ակտիվ են, քան միջին տարիքի կանայք: Յետաքրքրական է, որ կին փորձագետները նշում են, որ չնայած սեռի քվոտային կանանց քաղաքականության մեջ քիչ տեղ է հատկացվում:

«Կանանց ամբիցիաները երբեք աջակցություն չեն ստացել հասարակության կողմից, և կանանցից անհամեմատ ավելի շատ ջանքեր են պահանջվում քաղաքական որոշումների կայացման մակարդակում կարիերա ստեղծելու համար, քան տղամարդկանցից, նույնիսկ հեղափոխությունից հետո»:

7.4 Երիտասարդական քաղաքականությունը

Ըստ 2013-2017թթ և 2018-2022թթ երիտասարդական պետական հայեցակարգերի, Հայաստանում մշակվել են երիտասարդական քաղաքականության կարճաժամկետ ռազմավարություններ: Սակայն այսօրվա դրությամբ ներկայիս ռազմավարությունը սառեցված է: Չնայած նրան, որ 2018թ-ի շարժումը տեղի ունեցավ երիտասարդների ակտիվ մասնակցությամբ և կառավարման համակարգում ընդգրկվեցին աննախադեպ թվով երիտասարդներ, նոր իշխանությունները նախաձեռնեցին օպտիմիզացիայի ծրագիր, որի շրջանակներում Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը միացվեց Կրթության և Մշակութային նախարարությունների հետ: Սրա նպատակն էր՝ պետական կառույցների կառավարումը ավելի արդյունավետ դարձնելը, ինչպես իրավիճակը, երբ Կառավարության տարբեր ստորաբաժիններ կատարում են միևնույն գործը՝ հաճախ առանց միմյանց հետ համագործակցելու և նույնիսկ իրար հակադրվելով: Այս փուլում սակայն, նոր Կառավարության կողմից դեռ չեն ուրվագծվել երիտասարդական քաղաքականության առաջնահերթությունները:

Արդյունքում ստեղծվել է նոր նախարարություն՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, որը որոշ փորձագետների կողմից արդեն անվանվել է «սուպերնախարարություն»: Քննադատներն ասում են, որ նոր «սուպերնախարարությունը» չի կարողանալու կատարել իր գործառույթներն արդյունավետ կերպով այսչափ տարբեր ոլորտներում: Չնայած, որ այս հայտարարությունները կարող են իրենց հետևում ունենալ քաղաքական շահեր, փորձագետները մտահոգ են, որ երիտասարդական քաղաքականությունը պարզապես կորելու է տարբեր ոլորտների խնդիրների մեջ:

Որոշ հասարակական երիտասարդական կազմակերպություններ, ինչպիսիք են Հայկական պրոգրեսիվ երիտասարդություն ՀԿ-ն և «Մենք» երիտասարդական ՀԿ-ն, արտահայտել են իրենց [մտահոգությունը](#)՝ կապված այս իրավիճակի, ինչպես նաև այն փաստի հետ, որ երիտասարդական քաղաքականությունը հստակեցված չէ։ Այսպիսով կա վտանգ, որ երիտասարդական քաղաքականությունը դուրս կմնա հանրային քաղաքականության օրակարգից։

Չնայած փորձագետների մեծամասնությունը չի դիտարկում նախարարությունների այս միավորումն իբրև վճռորոշ փաստ, նրանցից ոմանք նշում են, որ կարևոր է ունենալ պաշտոնական կառույց, որը պատասխանատու կլինի երիտասարդական քաղաքականության և ծրագրերի համակարգման և իրականացման համար։

«Հիմա կարևորն այն է, որ ՀՀ-ում իրականացվեն ժողովրդավարական ռեֆորմներ։ Կարիք չկա ունենալ կենտրոնացված հաստատություններ, որոնք պարունակում են հին մոդելները /երիտասարդության վարքագծի/ վերարտադրելու վտանգ։ Մեզ պետք չէ թելադրող կառավարություն, փոխարենը պետք է կառավարություն, որն աջակցում է» ԱԺ կին պատգամավոր։

Ավելի կարևոր է ունենալ թիմ, որը կաջակցի երիտասարդական քաղաքականության մշականը, ինչպես նաև ունենալ երիտասարդական քաղաքականության իրականացման մեթոդաբանություն։ Պետական հաստատությունների հիմնական գործառույթներից մեկը պետք է լինի երիտասարդներին անընդհատ մոտիվացնող ուղերձներ հղելը։

Շատերը նշում են նաև, որ Սպորտի և երիտասարդության հարցերով նախկին նախարարությունը ավելի շատ կենտրոնացած էր սպորտի հետ կապված խնդիրների վրա։ Երիտասարդական կազմակերպությունների համար այսօր հիասթափեցնող է կառուցվածքային փոփոխությունների գործընթացում թափանցիկության բացակայությունը, ինչպես նաև զարգացումների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը։

«Այս ամբողջ տարին մենք տեղեկատվական վակուումի մեջ ենք՝ անտեղյակ լինելով զարգացումներից»՝ քաղաքացիական հասարակության փորձագետ։

ՀՀ-ում երիտասարդական քաղաքականությունը քննարկելիս որոշ փորձագետներ ընդգծում են, որ կարևոր է ոչ թե երիտասարդական պետական հայեցակարգ և ռազմավարություն ունենալը, այլ երիտասարդական քաղաքականության տեղայնացման ծրագիր ունենալը, ինչպես նաև երիտասարդությանը տեղական ինքնակառավարման մեջ ներգրավելու համար հարթակների ստեղծումը։

8. Երիտասարդների մասնակցությունը խաղաղաշինությանը

8.1 Իրավիճակի վերլուծությունն ու ընդհանուր միտումներ

Ղարաբաղյան հակամարտությունը շարունակվում է արդեն ավելի քան երեսուն տարի: Դրան զուգահեռ միշտ ընթացել են խաղաղաշինական նախաձեռնություններ, ինչպես հակամարտության առաջին տարիներին, այնպես էլ հակամարտության պատերազմական փուլից հետո՝ 1994-ի զինադադարից ի վեր:

1994-ի զինադադարի կնքվելուց երկուսուկես տասնամյակների ընթացքում նախաձեռնվել են ոչ պաշտոնական դիվանագիտության (*Track 2*) բազմաթիվ միջոցառումներ՝ ուղղված հակամարտության լուծմանը կամ տրանսֆորմացիային: Ոչ պաշտոնական դիվանագիտություն հասկացությունը սովորաբար ենթադրում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից իրականացված նախաձեռնություններին՝ ի տարբերություն պաշտոնական դիվանագիտությանը, որը ենթադրում է պետական այրերի մասնակցություն բանակցություններում: Որոշ իրավիճակներում երկխոսությունն ընթանում է թե՛ քաղաքացիական հասարակության և թե՛ պետական օղակներին մոտ կանգնած տարբեր խմբերի միջև, որոնք հանդես են գալիս ոչ պաշտոնական դիրքերից (*Track 1.5*):

Ոչ պաշտոնական դիվանագիտության օրինակներից են՝

1. ծրագրեր, որոնք երկխոսության մեջ ընգրկում են քաղաքացիական հասարակությունների ներկայացուցիչներին,
2. ծրագրեր, որոնք ընդգրկում են լրատվամիջոցներին՝ խաղաղության հարցերի շուրջ լրագրությունը խթանելու նպատակով,
3. երկու հասարակություններում զուգահեռ իրականացվող ծրագրեր, որոնք միտված են հասարակությունների ներսում կողմնորոշումների փոփոխությանը,
4. տարածաշրջանային ծրագրեր, որոնք հակամարտության մեջ գտնվող երկրների ներկայացուցիչներին ներգրավում են տարածաշրջանային հարցերի քննարկմանը:

Խաղաղաշինական ծրագրերի հանդեպ Ադրբեյջանի իշխանությունների վերաբերմունքը միշտ հակասական է եղել, որոնք հաճախ խոչընդոտել են նման նախաձեռնությունները: Չնայած Հայաստանի իշխանություններն ընդհանուր առմամբ հանդուրժողականություն են ցուցաբերել խաղաղաշինական նախաձեռնություններին, այնուամենայնիվ, որոշ կասկածամտությունն նույնպես եղել է: Խաղաղաշինության նկատմամբ բացասական վերաբերմունքը հաճախ արտահայտել են իշխանամետ խմբերն ու լրատվամիջոցները: Նրանք երբեմն մեղադրում էին մասնակիցներին Ադրբեյջանին «ծախված» լինելու մեջ: Որոշ դեպքերում տեղի էին ունենում բռնի գոծողություններ, օրինակ, երբ 2012-ին փորձ արվեց Հայաստանում ադրբեյջանական ֆիլմերի փառատոն կազմակերպել, ինչի արդյունքում խաղաղաշինական մի քանի ՀԿ-ներ ենթարկվեցին սուր հարձակումների:

Ղարաբաղյան հակամարտության խաղաղաշինության հիմնական դերակատարներին կարելի է բաժանել երկու խմբի՝ միջազգային կազմակերպություններ և տեղական ՅԿ-ներ: Միջազգային կառույցները, իրենց հերթին, բաղկացած են դոնորներից և ծրագրեր իրականացնող կազմակերպություններից: Տեղական կազմակերպությունները հիմնականում Հայաստանում, Ադրբեջանում և ԼՂ-ում գործող ՅԿ-ներն են, որոնք ստանում են դրամաշնորհներ միջազգային դոնորներից և մասնակցում տարբեր ծրագրերին:

Կարևոր է նաև նշել, որ այս միջազգային դոնորներից և կազմակերպություններից շատերը ակտիվ են եղել նաև հայ-թուրքական երկխոսության ծրագրերում, հատկապես այսպես կոչված «Ֆուտբոլային դիվանագիտության» ժամանակներում՝ 2008-ից հետո, երբ թվում էր, թե հայ-թուրքական հարաբերությունները բարելավման ճանապարհին են:

8.2 Հոգեբանական ազդեցությունը

Ղարաբաղյան հակամարտության շփման գծում տիրող իրավիճակը ֆոկուս խմբերի մասնակիցների համար կարևորագույն խնդիրներից է: Ծառերի համար ամեն օր շփման գծից լուրեր կարդալը և հուսալը, որ լուրջ դեպքեր չեն գրանցվել առօրյայի մաս է դարձել: Չինադարարի խախտման արդյունքում մահվան դեպքերի գույժի զգացմունքային բեռը նրանց կյանքի անբաժան մասն է: Չնայած նրան, որ բանակի հանդեպ վստահությունը²⁶ նպաստում է ընդհանուր անվտանգության զգացողության ամրապնդմանը, այնուամենայնիվ, շատեր շփման գծում ունեն երիտասարդ զինծառայող ազգականներ, և հակամարտությունը ներթափանցում է նրանց ընտանիքներ և ընկերական շրջապատ, քանի որ առկա է մտերիմին կորցնելու իրական վտանգ: Ֆոկուս խմբի 23-ամյա սյունիքի մասնակիցը այս իրավիճակն անվանում է «ներքին պարանոյա», որը սահմանափակում է քաղաքացու անձնական ազատությունը: Այն մասնակիցները, որոնք ապրում են հակամարտության ուղիղ ազդեցության տակ գտնվող համայնքներում, ընդգծում են, որ Ղարաբաղյան հակամարտությունը ազդում է անձի զարգացման վրա, քանի որ «մարդիկ դառնում են ավելի անհանգիստ և ի գորու չեն լինում երկարաժամկետ ծրագրեր կազմել»:

Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներում նշվում է նաև «քաղաքական շահարկումների նպատակներով օգտագործված լինելը»: Տավուշի բնակիչներն ապրում են սահմանին այնքան մոտ, որ կարող են լսել կրակոցները, գնդակոծությունները և զինադարարի խախտման այլ դրվագներ: Վերջին տարվա ընթացքում բնակիչները սովորել են տարբերակել զինատեսակները ձայնի միջոցով:

Քննարկելով հայ-թուրքական հարաբերությունները, մասնակիցները նշում են, որ իրավիճակն այլ է, չնայած նրան, որ հոգեբանական տրավման հայ ինքնության առանցքային մասն է: Չնայած փակ սահմանն ու դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը խորացնում են Թուրքիայի հանդեպ անվստահությունը, մարդկային մակարդակում հարաբերությունները

²⁶ 18-35 տարեկան երիտասարդների մոտ 80 տոկոսը վստահում է բանակին <https://caucasusbarometer.org/en/cb2017am/TRUARMY-by-AGEGROUP-withoutdkra/>

բարելավվում են: Թուրքիայի հետ հարաբերությունները նկարագրվում են որպես «այնքան մոտ, բայց այնքան հեռու», հատկապես Շիրակի մարզի գյուղական համայնքների շրջանում, ովքեր Թուրքիա մուտք գործելու համար պետք է ճամփորդեն Վրաստան, չնայած ապրում են անմիջապես Թուրքիայի սահմանին:

8.3 Տնտեսական ազդեցությունը

Ֆոկուս խմբերի բոլոր մասնակիցների համար ակնհայտ են փակ սահմանների բացասական տնտեսական հետևանքները: Նրանք չեն կարող ակնկալել տնտեսական ներդրումներ իրենց համայնքներում: Ավելին, Տավուշի մարզում հակառակորդի կրակոցների վտանգի պատճառով մարդիկ չեն օգտագործում պտղատու հողերի մեծ տարածքներ՝ հատկապես գյուղատնտեսական աշխատանքների ժամանակաշրջանում: Տնտեսական խնդիրների հետ կապված հարցերի թվում մասնակիցներն ընդգծում են նաև պետական բյուջեում հսկայական ռազմական ծախսերը, որոնք խոչընդոտում են հասարակական այլ ոլորտների զարգացմանը:

«Եթե հակամարտությունը լուծվեր մենք ստիպված չէինք լինի այսքան մեծ գումարներ հատկացնել բանակին: Այդ գումարները կարելի կլիներ օգտագործել մարդկանց կյանքը բարելավելու ուղղությամբ՝ ներդրումներ կատարելով այլ ոլորտներ» Աողամարդ, 26 տարեկան, Շիրակ, քաղաքային համայնք:

Հակամարտության տնտեսական հետևանքների թվում մասնակիցները նշում են նաև սահմանամերձ գյուղերի դատարկվելը, քանի որ մարդիկ գերադասում են տեղափոխվել երկրի այլ գյուղական կամ քաղաքային մասեր:

8.4 Քննադատական մտածողությունը

Ֆոկուս խմբերի երիտասարդ մասնակիցները արտահայտում են հակառակ կողմի հետ խաղաղաշինության և հակամարտության տրանսֆորմացիայի մասին խոսելու պատրաստակամություն: Բոլորը խաղաղության և կայունության հույս են հայտնում: Դրա հետ մեկտեղ նրանց մեծամասնությունը չի պատկերացնում, թե ինչպես կարող է սեփական ներդրումն ունենալ թշնամի երկրների միջև հարաբերությունների տրանսֆորմացիային ուղղված խաղաղաշինական նախաձեռնություններում: Այս պնդումը հատկապես վերաբերում է դարաբաղյան հակամարտությանը: Ավելին, շատերը անվտանգ չեն զգում իրենց տեսլականը հանրայնացնել՝ հանրային պարսավանքից խուսափելու համար: Ընդհանուր առմամբ կա համոզմունք, որ դարաբաղյան հակամարտության կարգավորումը չի ենթադրում հասարակ մարդկանց մասնակցություն խաղաղության գործընթացին: Լայնորեն քննարկվում է արտաքին գործոնների որոշիչ դերը, ինչպիսիք են տարածաշրջանային իրավիճակը և մեծ տերությունների աշխարհաքաղաքական հետաքրքրությունների փոփոխությունները: Դրանից բացի, քաղաքացիական հասարակության փորձագետներից մեկն ընդգծում է, որ Ադրբեյջանի հետ հակամարտությունն ավելի անմիջականորեն անդրադարձավ երիտասարդ սերնդին 2016թ-ի ապրիլյան «քառօրյա» պատերազմից հետո, քանի որ շատերը կորցրեցին իրենց հասակակիցներին կամ ծանոթներին, ինչի արդյունքում խաղաղաշինական նախաձեռնություններին մասնակցելը դարձավ տրավմատիկ:

Տավուշի մարզում ֆոկուս խմբի մասնակիցը ասում է (27 տարեկան տղամարդ)։

«Երիտասարդները չեն մասնակցում խաղաղաշինական նախաձեռնություններին. քանի որ դրանք հասանելի չեն մեզ համար, բայց իմ կարծիքով երիտասարդները ավելի խաղաղամետ են, պարզապես մենք չուներք լծակներ: Այս կոնֆլիկտը լուծելու երկու ճանապարհ կա՝ մղել ևս մի պատերազմ կամ խաղաղության պայմանագիր կնքել: Խաղաղությանը հակված լինելով՝ երիտասարդները կարող են կանխել պատերազմը, բայց երբ Փաշինյանն ու Ալիյևը բանակցում են, երիտասարդները հազիվ թե կարողանան միջամտել»:

Ղարաբաղյան հակամարտության ոլորտում փորձագետների մեծամասնության կարծիքով՝ խաղաղության գործընթացը ո՛չ թափանցիկ է, ո՛չ էլ ներառական, սակայն «թավշյա հեղափոխությունից» հետո թափանցիկությունն ու ներառականությունն մեծացել են.

«Երկար տարիներ ասվել է, որ մենք չի նկատի ունենալով սովետական անցյալը և նախկին իշխանություններին՝ ձեր փոխարեն կմտածենք, դուք կարիք չուներ որևէ բան անելու» (շտարեկան տղամարդ, Տավուշ):

Այս մտածելակերպը դեռ խորապես առկա է շատերի մտքում, և, չնայած «թավշյա հեղափոխության» հաջողությանը, այս մտայնությունը դեռ գերիշխում է երիտասարդության ինքնագիտակցության մեջ: Աժ պատգամավոր փորձագետներից մեկը նշում է.

«Չայաստանում տեղի է ունեցել կամ տեղի է ունենում մեծ փոփոխություն: Կարող ենք ասել, որ հայտարարվել է, թե կոնֆլիկտները չեն կարող լուծվել վերևից ներքև մոտեցմամբ: Մինչ այժմ մեզ թվում էր, որ մենք որոշ հարցերի պատասխաններն ունենք և որ մենք գիտենք, թե ինչպես ենք ուզում լուծել այդ հարցերը, սակայն կայուն լուծման համար անհրաժեշտ է հաշտեցում: Եթե մենք ուզում ենք երկարաժամկետ խաղաղություն մեր տարածաշրջանում, ապա պետք է երկարաժամկետ կտրվածքում մեզ ապահով զգանք»:

Քաղաքացիական հասարակության մեկ այլ փորձագետ ասում է.

«Ես աշխատում եմ ԼՂ-ի երիտասարդ կանանց հետ, նրանք ցանկանում են հանդիպել արդբեջանցիներին և խոսել նրանց հետ: Ես բացահայտել եմ, որ նման հանդիպումների ընթացքում տեղի է ունենում առողջացում, քանի որ մանկուց ի վեր նրանք լսում են պատերազմի և մարդկային կորուստների մասին՝ մեծանալով պատերազմի վախով և կուտակելով տրավմաներ, որոնց մասին պետք է խոսել»:

Փորձագետները երիտասարդների մեջ տեսնում են խաղաղության մշակույթ ստեղծելու ներուժ: Այնուամենայնիվ, փորձագետների համայնքի կարծիքով խաղաղության և խաղաղաշինության թյուր ընկալումը խոչընդոտում է երիտասարդների մասնակցությանը: Տասնամյակներ շարունակ մոտեցում է եղել, որը հավասարեցրել է խաղաղությունն ու խաղաղաշինությունը «թուլության» և «հանձնվելու» հետ: Աժ պատգամավոր փորձագետի կարծիքով՝ «խաղաղություն» եզրույթի միակ լայնորեն ընդունված ձևակերպումները ներառում են վճռական գործողությունների որոշ աստիճան, օրինակ,

«խաղաղություն պարտադրել», «եթե խաղաղություն ես ուզում, պատրաստվիր պատերազմի» և այլն: Սա էլ իր հերթին բերում է նրան, որ բացառապես տղամարդիկ են մասնակցում խաղաղության մասին քննարկումների, քանի որ նրանք են հասարակության «ուժեղ» մասը, իսկ կանայք դուրս են մնում գործընթացից:

Չնայած նրան, որ երիտասարդները դժվարությամբ են պատկերացնում իրենց մասնակցությունը հակամարտության լուծման գործընթացին, մեծամասնությունը հավատացած է, որ իրավիճակը կբարելավվի մարդկանց միջև երկխոսության պարագայում, ինչպես նաև ագրեսիային և ատելության խոսքին հակազդելու միջոցով: Որպես խաղաղության կարևորագույն բաղկացուցիչ է կշռվում հաղորդակցությունը: Տավուշի սահմանաբերձ համայնքի կանայք այսպես են ձևակերպում ադրբեջանցիների հետ հաղորդակցության կարևորությունը.

«Մենք չգիտենք, թե նրանք իրականում ինչ են մտածում, լրատվամիջոցները լուսաբանում են միայն նրանց իշխանությունների կարծիքը»:

Այս միտքը կրկնվում է նաև մյուս ֆոկլուս խմբերի խմբերի կողմից: Ուշագրավ է նաև, որ մինչդեռ մասնակիցների գերակշռող մեծամասնությունն արտահայտում էր հարևան երկրների երիտասարդների հետ հանդիպելու պատրաստակամություն, այն մասնակիցները, որոնք արդեն ունեին նման փորձ բացառապես դրական տպավորություններով էին կիսվում:

Խաղաղաշինության ոլորտի փորձագետի խոսքով.

«Երիտասարդությունն իր էությունը դեմ է սահմաններին և սահմանափակումներին: Պատկերացրեք, որ դուք սահմանաբերձ Բայանդուր գյուղի ճիրակ բնակիչ եք և ամեն առավոտ լսում եք մահմեդական աղոթքի կանչը սահմանի հակառակ կողմից: Մի՞ թե չէիք ցանկանա իմանալ, թե այնտեղ ինչ է կատարվում»:

Հարցված փորձագետները հաստատում են, որ երիտասարդությունը կարող է զգալի ներդրում ունենալ խաղաղության մշակույթի սերմանման և խաղաղության հաստատման գործում՝ ուղիղ երկխոսության միջոցով: Երիտասարդները պետք է սահմանի հակառակ կողմի երիտասարդների հետ ծանոթանալու հնարավորություն ունենան: Նախկինում կամ ներկայում խաղաղաշինական հարթակներում ընդգրկված փորձագետները շեշտում են, որ ամենահաջողված ծրագրերը երիտասարդներին մշակութային, ստեղծագործական կամ այլ նախաձեռնություններին համատեղ մասնակցելու հնարավորություն տվող ծրագրերն են, և ընդհանրապես, այն ծրագրերը, որոնք ուղղված են մարդկային շփմանը.

«Արվեստագետը պետք է հանդիպի արվեստագետին, շինարարը՝ շինարարին, թարգմանիչը՝ թարգմանչին: Հաղորդակցությունն է մարդկանց պատրաստում խաղաղությանը»:

Տավուշի մարզում ֆոկլուս խմբի մասնակիցն ասում է.

«Ես կարծում եմ, որ մշակութային մակարդակում մենք կարող ենք հաղթահարել մեր տարածայնությունները, սակայն քաղաքական մակարդակում դա դեռևս հնարավոր չէ: Չլուծված քաղաքական խնդիրները ստեղծում են հասարակական ճգնաժամ, մենք շարունակ խոսում ենք մեր տարբերությունների մասին, բայց եկե՛ք խոսենք մեր նմանություններից»:

Ֆոկուս խմբերի մասնակիցների մեծամասնության կարևորագույն ակնկալիքը նոր իշխանությունից՝ գինադադարի պահպանումն ու բռնի հակամարտության կանխարգելումն է: Սա հնարավոր է միայն այն պարագայում, եթե ապահովվի հակամարտության կողմերի միջը ուժի հավասարակշռություն: Այլապես բռնության սրացումը գրեթե անխուսափելի է: Ճիրակի մարզը ներկայացնող 23-ամյա տղամարդն ասում է.

«Չավասարակշռության պահպանման համար պետք է, որ կողմերը շարունակաբար և հերթով մեկական քայլեր ձեռնարկեն: Նման մի քայլ արդեն կատարել է Չայաստանը՝ իրականացնելով հեղափոխություն: Չեռևարար՝ երիտասարդներն ակնկալում են նման քայլ նաև Ադրբեջանում, որպեսզի կարողանան առաջ շարժվել դարաբաղյան հակամարտության լուծման գործընթացում»:

Չայ-թուրքական հարաբերություններում ևս ցանկացած կայուն փոփոխություն կապվում է թուրքիայում իշխանափոխության հետ: Փորձագետների մեծամասնությունը համաձայն է, որ հարևան պետություններում իշխանափոխությունները կարող են դրականորեն անդրադառնալ տարածաշրջանի հակամարտությունների լուծման և խաղաղաշինության հեռանկարների վրա: Դրա հետ մեկտեղ փորձագետներն անհնար են համարում հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների զարգացման կանխատեսումը և թերահավատ են, որ մոտակա 5-10 տարվա ընթացքում կգրանցվի որևէ զգալի փոփոխություն:

Այս առնչությամբ անգամ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարն է շեշտում Չայաստանի երիտասարդության դերի կարևորությունը: 2018թ-ի խաղաղ իշխանափոխությունից կարճ ժամանակ անց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Գուտերեշը այն անվանեց խաղաղ փոփոխության «Ֆանտաստիկ օրինակ»:
«Չայաստանի երիտասարդները այդ երկրում այս տարի տեղի ունեցած խաղաղ փոփոխության կիզակետում էին՝ ցույց տալով երիտասարդության՝ իրենց ձայնը օգտագործելու և ժողովրդավարությունը զարգացնելու ներուժը»:²⁷

8.5 Խաղաղաշինությունն ու երիտասարդությունը

Խաղաղաշինության գործընթացներում երիտասարդների մասնակցությունը տեղի է ունենում հայկական և միջազգային /Ռիմնականում եվրոպական/ ՅԿ-ների կողմից նախաձեռնած միջոցառումների տեսքով՝ խաղաղաշինության դպրոցներ, ամառային դպրոցներ, գիտաժողովներ, երիտասարդական հավաքներ և այլ

²⁷ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ելույթը, 25-ը սեպտեմբերի 2018.
<https://www.un.org/sg/en/content/sg/statement/2018-09-25/secretary-generals-address-general-assembly-delivered-trilingual>

միջոցառումներ: Եվրասիա համագորակցություն հիմնադրամը (ԵՀՀ) այն կազմակերպություններից մեկն է, որի խաղաղաշինական աշխատանքը կենտրոնացած է երիտասարդների վրա: ԵՀՀ-ի աշխատանքի ուղղություններից մեկը «[Երիտասարդական բանկերի](#)» երիտասարդական կենտրոնների կազմակերպումն է մարզերում, որոնց միջոցով երիտասարդները հնարավորություն են ստանում մասնակցելու սոցիալական ձեռներեցության և քաղաքացիական գործունեությանը, ներառյալ խաղաղաշինությունը:²⁸ Այս մոտեցումը առաջին անգամ կիրառվել է Հյուսիսային Իռլանդիայում: ԵՀՀ-ի «Երիտասարդական բանկերը» հատկապես ակտիվ էին հայ-թուրքական ծրագրերում: Այսօր ԵՀՀ-ի Հակամարտության տրանսֆորմացիայի դպրոցները բավականին հայտնի են: Դրանց ընթացքում երիտասարդները ձեռք են բերում քննադատական մտածողության և բանավեճի հմտություններ, ժողովրդավարական խաղաղության գաղափարներ, ինչպես նաև այլ գիտելիքներ և հմտություններ:

Խաղաղաշինության և մասնավորապես երիտասարդությանն ուղղված նախաձեռնությունների համար կարևոր գործոն է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Եվրոպական գործընկերություն հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» ծրագիրը (*EPNK*), որի շրջանակում իրականացվում է երիտասարդության մասնակցությամբ մի քանի ծրագրեր:²⁹ *EPNK*-ը միավորում է մի քանի եվրոպական խաղաղաշինական ՀԿ-ների, որոնք աշխատում են Հայաստանում, Ադրբեջանում և ԼՂ-ում իրենց գործընկերների հետ: Այդ ՀԿ-ներից երկուսը կենտրոնանում են երիտասարդների հետ աշխատանքների վրա՝

- Ճգնաժամային կառավարման նախաձեռնությունը (*CMI*) նպատակ ունի խթանել քննադատական մտածողությունը խաղաղության գործընթացը փակուղուց դուրս բերելու համար: Սա իրականացվում է երկխոսության միջոցով՝ որում ներգրավվում են երիտասարդները: *CMI*-ը հիմնականում կենտրոնացնում է իր գործունեությունը՝
 - հակամարտության բոլոր կողմերի երիտասարդ առաջնորդների համար հանդիպումներ կազմակերպելու վրա,
 - երիտասարդների միջև վստահության կառուցման նախաձեռնությունների մշակման և իրականացման վրա, այս ծրագիրը մասնավորապես թիրախավորում է նոր սերնդի ներկայացուցիչներին, որոնք չունեն նախապատերազմական համակեցության փորձ,
 - երիտասարդների և տեղական ու միջազգային պաշտոնյաների միջև հանդիպումների կազմակերպման վրա՝ նպատակ հետապնդելով, որ նրանք կիսվեն խաղաղության գործընթացի վերաբերյալ տեղեկություններով և նոր գաղափարներով:
- Կվինսա թիլ Կվինսա հիմնադրամն աջակցում է հակամարտության բոլոր կողմերի երիտասարդ կանանց և նրանց իրավունքների իրացմանը: Հիմնադրամը համագործակցում է տեղական կանանց կազմակերպությունների և կանանց իրավունքներով զբաղվող անհատ

²⁸ <https://epfarmenia.am/project/youthbank>

²⁹ <http://www.epnk.org/>

ակտիվիստների հետ և օգնում է հակամարտությունից տուժած հայ և ադրբեջանցի երիտասարդ կանանց աջակցող մենթորներին՝ որպեսզի նրանք կարողանան ավելի ակտիվ դերակատարություն ունենալ խաղաղաշինական գործունեության մեջ:

ԵՀՀ-ն իրականացնում է EPNK-ի շրջանակներում գրանտային մի ծրագիր, որի նպատակն է աջակցել խաղաղաշինական և հակամարտության տրանսֆորմացիային ուղղված համայնքային (*grassroots*) ծրագրերին:³⁰ Տարբեր խմբեր Հայաստանում և Ադրբեջանում արդեն իսկ իրականացրել են ծրագրեր ուղղված հիշողության, այլընտրանքային պատմության, ինքնության և հակամարտության հարցերին: Դրանց շարքում հարկ է առանձնացնել մի քանի ծրագիր, որոնք ուղղված են երիտասարդներին, օրինակ՝ «Հայկական պրոգրեսիվ երիտասարդություն» ՀԿ-ի «Հարաբերությունների հոգեբանություն և հանդուրժողականություն» ծրագիրը: Մեկ այլ ծրագիր է «Ալտեր-նոշն»-ը (*Alter-notion*), որն իրականացվել է հայ և ադրբեջանցի երիտասարդ լրագրողների և բլոգերների համար՝ հիշողությունների և ընդհանուր մշակույթի վերաբերյալ համատեղ նյութեր մշակելու միջոցով:

Երիտասարդության հետ աշխատանքում հատուկ տեղ ունի «[Կոնֆլիկտի տրանսֆորմացիայի Իմեջին կենտրոնը](#)», քանի որ այն հենց տարածաշրջանի երիտասարդների նախաձեռնության արդյունքում ծնված կազմակերպություն է:³¹ Իմեջին կենտրոնի երկխոսության մեթոդը ստեղծվել է թուրք և հայ ուսանողների և երիտասարդ մասնագետների համագործակցության արդյունքում: 2005 և 2006 թվականներին նրանք միասին սովորում էին Միացյալ Նահանգներում և յուրաքանչյուր շաբաթ հանդիպում էին քննարկելու հայ թուրքական հարաբերություններն անցյալում, ներկայում և ապագայում: Կենտրոնի երկխոսության մեթոդը համատեղում է խնդիրալուծող մոտեցումը նարատիվ մեդիացիայի և ռեֆլեկտիվ վերլուծության հետ: Այն հիմնվում է հակամարտության անցյալի, ներկայի և ապագայի հետ առերեսման երկխոսության վրա՝ հավատալով, որ ներկայի և ապագայի լուծումները կարելի է գնտել անցյալը քննադատաբար վերլուծելու արդյունքում:

Իմեջին կենտրոնի դեպքը հատկանշական է նաև նրանով, որ այն հանդիսանում է խաղաղաշինության քաղաքական իրականության վրա ուղղակի ազդեցության օրինակ, որը տեղի ունեցավ հեղափոխության արդյունքում: Իմեջին կենտրոնի հիմնադիրներից Մարիա Կարապետյանը, ով ակտիվ մասնակցել է 2018թ-ի շարժմանը, 2018թ-ի դեկտեմբերի ընտրությունների արդյունքում դարձավ ԱԺ պատգամավոր և Քաղաքացիական պայմանագրի կուսակցության վարչության անդամ: Իմեջին կենտրոնի ծրագրերի մեկ այլ մասնակից Միքայել Չոլյանը ևս ընտրվեց ԱԺ պատգամավոր և դարձավ ԱԺ Արտաքին հարաբերության հանձնաժողովի անդամ:

Հայ-թուրքական հարաբերությունները Շիրակի մարզի ֆոկլոս խմբերի մասնակիցների հետաքրքրության շրջանակում էին: Իսկ Տավուշի և Սյունիքի մասնակիցները հիմնականում քննարկում էին դարաբաղյան հակամարտությունն ու հայ-ադրբեջանական հարաբերությունները:

³⁰ <https://epfarmeria.am/project/peace>

³¹ <http://imaginedialogue.com/>

8.6 Խաղաղաշինությունն ու երիտասարդությունն այսօր. Նոր հնարավորություններ

2018թ-ի իրադարձությունները կարծես նոր հնարավորություններ ստեղծեցին խաղաղաշինության գործընթացի վերսկսման համար: Իշխանությունների կողմից ձևակերպած նոր դիրքորոշումն այն է, որ ցանկացած լուծում ընդունելի է եթե այն ընդունելի է Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի ժողովրդների համար: Այս բանաձևը, ինչպես նաև Նիկոլ Փաշինյանի և նրա թիմի կողմից արված այլ հայտարարությունները կարծես միտված են ցուցադրելու Հայաստանի նոր իշխանությունների պատրաստակամությունը հասարակությունների միջև երկխոսությանը: Միաժամանակ, Փաշինյանը չափազանց զգույշ է զիջումների մասին խոսակցություններում՝ հայտարարելով, որ դրանք չեն կարող լինել միակողմանի: Նա կոչ է անում հայերին և ադրբեջանցիներին մասնակցել կառուցողական երկխոսությանը: Դրա հետ մեկտեղ նա և նրա թիմակիցներից ոմանք, մասնավորապես պաշտպանության նախարարը, արել են նաև բավականին կոշտ հայտարարություններ: Մնում է տեսնել, թե ինչպիսին կլինի ադրբեջանի արձագանքը Հայաստանի նոր իշխանությունների դիրքորոշմանը: Թերևս կարելի է ակնկալել, որ Ադրբեջանի իշխանություններն այսօր կարող են պակաս թշնամաբար վերաբերվել խաղաղաշինական նախաձեռնություններին, անշուշտ դրանք իրենց վերահսկողության ներքո պահելով:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ ոչ պաշտոնական դիվանագիտության համար անհրաժեշտ պայմանները հնարավոր է բարելավվեն: Հայկական կողմը, որդեգրելով ժողովրդավարական արժեքներ պետք է որ պատրաստ լինի հասարակությունների միջև երկխոսություն խրախուսելու քաղաքականությանը: Ադրբեջանական կողմը, մնալով կասկածամիտ ոչ պաշտոնական դիվանագիտության նախաձեռնությունների հանդեպ, այս պահին ևս հավանաբար ավելի բաց կլինի նման նախաձեռնությունների համար, սակայն այն պարագայում, եթե դրանք չհատեն որոշակի սահմաններ, ինչպես նաև դրանց արդյունքը կանխատեսելի լինի ադրբեջանական կողմի համար:

Կողմերն արտահայտել են հասարակություններին խաղաղության պատրաստելու իրենց պատրաստակամությունը և, չնայած նրան, որ կողմերից յուրաքանչյուրն իր սեփական ըմբռնումն ունի այդ հարցի վերաբերյալ, նրանք չեն կարող ամբողջությամբ անտեսել հասարակություններին խաղաղությանը պատրաստելու անհրաժեշտությունը: Ավելին, Մինսկի խմբի համանախագահները, ինչպես նաև Եվրամիությունն արտահայտել են դարաբաղյան խնդրի հարցում առաջխաղացման վերաբերյալ իրենց լավատեսությունը, ինչի հիման վրա կարելի է ակնկալել, որ նրանք կնպաստեն ոչ պաշտոնական դիվանագիտության ոլորտում ջանքերին:

Վերջին տարվա խաղաղաշինական նախաձեռնությունների արդյունքը գնահատելը դյուրին չէ: Մի կողմից կարելի է խոսել հստակ արդյունքների բացակայության մասին, հաշվի առնելով, որ դարաբաղյան հակամարտությունը չի մոտենում իր հանգուցալածմանը: Մյուս կողմից, բացառությամբ «քառօրյա պատերազմի», ընդհանուր առմամբ, զինադադարի ռեժիմը պահպանվում է քառօրյ դարից ավել՝ առանց խաղաղապահների միջամտության, ինչը կարելի է

համեմատական հաջողություն համարել: Այս հաջողությունը կարելի է նաև մասամբ դիտարկել որպես բազմաթիվ խաղաղաշինական նախաձեռնությունների արդյունք:

Տարածաշրջանում խաղաղաշինական նախաձեռնությունների ճանապարհին ընկած են բազմաթիվ խոչընդոտներ: Դրանց թվում է իշխանությունների շահերը՝ սեփական կառավարման ձախողումներից հանրության ուշադրության շեղումը ագրեսիվ հռետորաբանության և քարոզի միջոցով: Սա ավտորիտար ռեժիմների կողմից լայնորեն կիրառվող ռազմավարություն է: Չնայած Հայաստանի նոր իշխանությունները մինչ օրս գերծ են մնացել նման ռազմավարության կիրառումից, նրանք դեռևս հապաղում են քննադատության ենթարկել ռազմատենչ հռետորաբանությունը, քանի որ նման փորձերը կարող են շահարկման առարկա դառնալ ընդդիմադիրների կողմից: Ընդհանուր առմամբ, քաղաքականության մշակման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցությունը ցածր է, իսկ հակամարտության լուծումն այն ուղորտներից է, որում իշխանությունը չի կարող քաղաքացիական հասարակության հետ կիսել պատասխանատվությունը: Քանի դեռ Հայաստանում այս իրավիճակը գնալով փոփոխվում է, հակամարտության մյուս կողմում քաղաքացիական հասարակության մեկուսացումը շարունակում է խորանալ:

Մեծ հաշվով, չնայած նրան, որ 2018թ-ի իշխանափոխությունը խաղաղաշինության նոր հեռանկարներ է ստեղծել, այդ հեռանկարները կմնան անիրականանալի այնքան ժամանակ, մինչև չլինի համանման մոտեցում Ադրբեջանի կողմից: Դրանից բացի, խաղաղաշինական նախաձեռնությունների ընկալումը հնարավոր է տարբեր կերպով ընկալվի Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում, որտեղ պատերազմի և ինքնապաշտպանման մտածելակերպն ավելի խորը սպիտեր է թողել մարդկանց վրա, և հետևաբար նրանք ավելի փակ և կասկածամիտ են դրսից նախաձեռնվող խաղաղաշինական ջանքերի նկատմամբ:

Խաղաղաշինական նախաձեռնություններն այնքանով կարելի է հաջողված համարել, որքանով դրանք օգտակար են եղել պահպանել հաղորդակցության միակ միջոցը: Դրանից բացի, այս նախաձեռնություններն օգնել են պահպանել այն այլախոհների ձայները, ովքեր քննադատել են լայնորեն տարածված ռազմատենչ հռետորաբանությունը երկու հասարակություններում, և չնայած նրան, որ այդ ձայները շարունակաբար մնացել են փոքրամասնություն, դրանք վերջնականապես լռեցնելու փորձերը չեն պսակվել հաջողությամբ:

Եվ վերջապես, խաղաղաշինական նախաձեռնությունները հաջողված են այն առումով, որ դրանք ռեսուրսներ են ստեղծել ապագայի համար, որոնք կարող են կիրառվել քաղաքական վերնախավերում մոտեցումների փոփոխությունից հետո, երբ հակամարտող կողմերի առաջնորդները պատրաստ լինեն համագործակցել՝ ստեղծելով հակամարտության կարգավորման հեռանկար: Այս գործոնը վերաբերում է խաղաղաշինական ծրագրերի երիտասարդական բաղադրիչին, որը հենց հանդիսանում է ապագայի ռեսուրսը: Սա հատկապես կարևոր է դարաբաղյան հակամարտության հարցում, քանի որ ի տարբերություն ավագ սերնդին, որը ապրել է խորհրդային ժամանակներում, հայ և ադրբեջանցի երիտասարդությունը հաղորդակցվելու սակավաթիվ առիթներ է ունեցել և մեծացել է հակամարտության ներքո: Հետևաբար, երիտասարդությունն առավել

խոցելի է բացասական կարծրատիպերի և թշնամու կերպարի քարոզի նկատմամբ, այդ պատճառով հատկապես կարևոր է, որ խաղաղաշինական նախաձեռնություններն ուղղված լինեն երիտասարդությանը:

9. Եզրակացություններ

- «Թավշյա հեղափոխությունից» առաջ տեղի ունեցած շարժումներին երիտասարդների մասնակցությունը խրախուսել է շատերին դուրս գալ փողոց և մասնակցել 2018թ-ի շարժմանը:
- Իշխանության ավտորիտար ոճը, կոռուպցիան, անհավասարությունն ու հնարավորությունների բացակայությունը, որոնք Հայաստանի երիտասարդների համար մեծագույն խնդիրներ էին, Էապես կրճատվել են 2018թ-ի ապրիլ-մայիսից հետո: Այժմ ողջ երկրի և, մասնավորապես, երիտասարդների համար բացվել են նոր հնարավորություններ, իսկ երիտասարդներից շատերը դառնում են քաղաքականապես ավելի ակտիվ՝ պաշտոններ ստանձնելով իրենց իշխանության օրենսդիր և գործադիր օղակներում:
- Իշխանության առջև դեռ ծառայած են բազմաթիվ խնդիրներ, որոնց երիտասարդները բախվում են ամեն օր: Սա հատկապես կարևոր է այն երիտասարդ կանանց և տղամարդկանց համար, ովքեր ապրում են Ադրբեջանին և Թուրքիային սահմանակցող գյուղական համայնքներում: Այս լրացուցիչ հանգամանքը նպաստում է երիտասարդության անտարբերությանն ու արտագաղթելու ցանկությանը:
- Հայաստանում ժողովրդավարական փոփոխությունները տեղի են ունեցել երիտասարդների ակտիվ մասնակցության շնորհիվ, չնայած այսօր դեռևս չկա հստակ պատկերացում այն մասին, թե ինչպես է իշխանությունը մտադրված փոփոխելու երիտասարդական քաղաքականությունը՝ երիտասարդների խնդիրները ավելի լավ լուծելու համար:
- Խաղաղաշինական նախաձեռնությունները, որոնք ուղղված են հակամարտության կողմերի միջև վստահության և փոխըմբռնման հաստատմանը, խաղաղաշինության գործընթացներում երիտասարդների մասնակցության կարևոր մասն են:
- Չնայած նրան, որ երիտասարդները լավ չեն տեղեկացված միջազգային երիտասարդական և խաղաղաշինական մեխանիզմների մասին, նրանք հետաքրքրված են երկխոսության ծրագրեր խթանելու նախաձեռնություններով:

Օգտագործված աղբյուրներ

1. Ամփոփ մեդիա. «Թեկնածուների միջին տարիք, ինքնաբացարկներ, ազգային փոքրամասնություններ և կանայք»
<https://ampop.am/%D5%A1%D5%AA2018-%D5%A9%D5%A5%D5%AF%D5%B6%D5%A1%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%AB%D5%BB%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%AB%D6%84-%D5%AB%D5%B6%D6%84%D5%B6%D5%A1%D5%A2%D5%A1/>
2. *Armenia Today*. "The youngest minister of Europe is from Armenia"
<http://hayernaysor.am/en/archives/290666>
3. *Concept of State Youth Policy, Armenia, 1998*.
http://www.youthpolicy.org/national/Armenia_1998_Youth_Policy_Concept.pdf
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
<http://www.msy.am/files/post/1426864819-hayecakarg.pdf>
5. *Council of Europe, National Youth Policies, Armenia*:
<https://www.coe.int/en/web/youth/national-youth-policies#%78%2239921579%22.%5B0%5D%7D>
6. *CRRC Caucasus Barometer*
<https://caucasusbarometer.org/en/>
7. *EPNK: The European Partnership for the Peaceful Settlement of the Conflict over Nagorno-Karabakh*, <http://www.epnk.org/>
8. *Government of the Republic of Armenia*
<https://www.gov.am/en/>
9. *Imagine Center for Conflict Transformation*, <http://imaginedialogue.com/>
10. *Independence Generation, Youth Study 2016 Armenia, Friedrich Ebert Stiftung*.
<http://library.fes.de/pdf-files/bueros/georgien/13149.pdf>
11. *Ministry of Sport and Youth Affairs, UNDP Armenia: "National Youth Aspirations Research Report", 2011*
http://www.youthpolicy.org/wp-content/uploads/library/2012_Armenia_youth_aspirations_Eng.pdf
12. *Մարդահամար 2011*, <https://www.armstat.am/file/doc/99486128.pdf>
13. *Radio Free Europe*. "Dashnaksutyun holds rally, again slams the government" <https://www.azatutyun.am/a/29959682.html>
14. *Radio Free Europe*. «Եթե երիտասարդական քաղաքականություն կա, ապա դրա մշակման պատասխանատու մարմին պիտի լինի»
<https://www.azatutyun.am/a/29679828.html>

15. Razminfo.am - "Reference (report) about the losses between April 2-5 - RA Ministry of Defense. <https://razminfo.wordpress.com/2016/04/14/reference-report-about-the-losses-between-april-2-5-ra-ministry-of-defense/>
16. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
<https://www.e-draft.am/en/projects/482>
17. UN Security Council Resolution 2250 (2015):
<https://www.un.org/press/en/2015/sc12149.doc.htm>
18. Youth Policy in Armenia, CoE, 2009
<https://rm.coe.int/16807023f0>

ՀԱՎԵԼՎԱԾ / Ֆոկուս խմբերի մասնակիցներ

Աղյուսակ 1: Մասնակիցներն ըստ մարզերի

	հոգի	տոկոս	ստուգված տոկոս
Ճիրակ	27	35.1	35.1
Սյունիք	23	29.9	29.9
Տավուշ	27	35.1	35.1
Ընդ.	77	100.0	100.0

Աղյուսակ 2: Մասնակիցների բնակավայրը

	հոգի	տոկոս	ստուգված տոկոս
	2	2.6	2.6
Աղին	1	1.3	1.3
Ախուրյան	1	1.3	1.3
Ակներ	2	2.6	2.6
Ամասիա	2	2.6	2.6
Անի	1	1.3	1.3
Առափի	2	2.6	2.6
Արեգնադեմ	1	1.3	1.3
Բավրա	1	1.3	1.3
Բերդավան	2	2.6	2.6
Դիլիջան	10	13.0	13.0
Գորիս	13	16.9	16.9
Գյումրի	12	15.6	15.6
Իջևան	9	11.7	11.7
Ջրափի	1	1.3	1.3
Քարաշեն	3	3.9	3.9
Կողբ	2	2.6	2.6
Կոթի	2	2.6	2.6
Մարալիկ	1	1.3	1.3
Նոյեմբերյան	1	1.3	1.3
Ճիրակավան	1	1.3	1.3
Տեղ	5	6.5	6.5
Ոսկևան	1	1.3	1.3
Երազգաորս	1	1.3	1.3
Բոլորը	77	100.0	100.0

Աղյուսակ 3: Մասնակիցների բնակավայրի տիպը

	հոգի	տոկոս	ստուգված տոկոս
գյուղ	32	41.6	41.6
քաղաք	45	58.4	58.4
ընդ.	77	100.0	100.0

Աղյուսակ 4: Մասնակիցների սեռը

	հոգի	տոկոս	ստուգված տոկոս
Իգ	58	75.3	75.3
Ար	19	24.7	24.7
Ընդ.	77	100.0	100.0

Աղյուսակ 5: Մասնակիցների կրթական մակարդակը

	հոգի	տոկոս	ստուգված տոկոս
Ավագ դպրոց	3	3.9	3.9
Բարձրագույն ավ.	43	55.8	55.8
Բարձրագույն ընթ.	21	27.3	27.3
Միջին դպրոց	5	6.5	6.5
Վերաորակավոր.	4	5.2	5.2
Ընդ.	77	100.0	100.0

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ֆոկուս խմբերի ուղեցույց

ՄԱՍ 1: ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

1. Որո՞նք են ձեր համայնքներում հիմնական մարտահրավերները, որոնց առնչվում են երիտասարդները:

Քարցազրուցավարին՝ կենտրոնանալ տնտեսական իրավիճակի և զբաղվածության հնարավորությունների վրա, ինչպես նաև սոցիալական խնդիրներին, աղքատության մակարդակին և ժամանցի կազմակերպման խնդիրներին:

2. Որքանո՞վ են ակտիվ երիտասարդները ձեր համայնքներում քաղաքական հարցերի շուրջ: Ի՞նչ աստիճանի մասնակցություն են ունեցել դուք և ձեր ծանոթ երիտասարդներն անցյալ տարի հեղափոխության ժամանակ:

Քարցազրուցավարին՝ ինչն էր խթանում երիտասարդներին մոբիլիզացվել և նպաստել հեղափոխությանը:

3. Ինչպե՞ս կգնահատեիք երիտասարդների մասնակցությունը տեղական համայնքային խնդիրների վերահսման և լուծման հարցերում:

Քարցազրուցավարին՝ հարցնել խնդիրների բարձրաձայման եղանակների մասին, կենտրոնանալ տեղական ընտրությունների, տեղական քաղաքացիական հասարակության գործողությունների, տեղական հանրաքվեների հարցերի վրա:

4. Ինչպիսի՞ն են ներկայիս կառավարության կողմից Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների ձեր ակնկալիքները: Որքանո՞վ են, ըստ ձեզ, երիտասարդներն ընդգրկված Հայաստանում բարեփոխումների ներկա փուլում: Քաղաքականության մշակման ո՞ր ոլորտներում պետք է երիտասարդությունն ավելի շատ ազդեցություն ունենա:

5. Դուք ձեզ վրա, առօրյա կյանքում, զգո՞ւմ եք փոփոխություններ հեղափոխությունից հետո: Եթե այո, ապա ինչպե՞ս է դա արտահայտվում: Եթե ոչ, ապա ի՞նչն է պատճառը, որ չկան փոփոխություններ, ձեր կարծիքով:

Քարցազրուցավարին՝ քննարկել նաև մասնակիցների շրջապատում հնարավոր փոփոխությունները:

ՄԱՍ 2: Խաղաղաշինություն

6. Ինչպե՞ս են դարաբաղյան չլուծված հակամարտությունը և հայ-թուրքական հարաբերությունների շուրջ իրավիճակը ազդում ձեզ /ձեր համայնքի վրա:

Քարցազրուցավարին՝ քննարկել անվտանգության, աղքատության, տնտեսական գործունեության, ժողովրդավարացման և այլ խնդիրներ:

7. Ի՞նչ սպասելիքներ ունեք ներկայիս իշխանություններից ԼՂ հակամարտության և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Ի՞նչ մասնակցություն կարող եք ունենալ դուք կամ ձեր գործընկեր երիտասարդները այս գործընթացներում:

Քարցազրուցավարին՝ խոսքը գնում է խաղաղարարական (peacebuilding) նախաձեռնությունների մասին լայն առումով: Նաև կոնֆլիկտների լուծման քաղաքական որոշումների վրա երիտասարդների ազդեցության մասին:

8. Ինչպե՞ս եք տեսնում ձեր ապագան հարևանների հետ 5 և 10-տարվա ժամանակահատվածում:

Հարցեր (ըրացուցիչ) «խաղաղարարների» խմբի համար

7.1 Որքանո՞վ են կարևոր, ձեր կարծիքով, խաղաղության գործընթացում քաղաքացիական հասարակության խաղաղարար նախաձեռնությունները: Ո՞ր նախաձեռնությունները կառանձնացնեիք ԼՂ հակամարտության և/կամ հայ-թուրքական կարգավորմանն ուղղված ջանքերի շարքից:

7.2 Բավարարվա՞ծ եք արդյոք երիտասարդության մասնակցության մակարդակից խաղաղարարական նախաձեռնություններում: Որո՞նք են այն խոչընդոտները, որ հանդիպել եք կամ կառանձնացնեիք «մյուս կողմի» հետ երկխոսության և խաղաղարարական գործընթացներում:

7.3 Լսե՞լ եք արդյոք ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 2250 բանաձևի մասին: Եթե այո, ապա ի՞նչ գիտեք: Լսել՞ եք արդյոք երիտասարդական պետական քաղաքականության մասին: Եթե այո, ապա ի՞նչ:

Քարտազորուցավարին՝ խոսքը գնում է «երիտասարդության մասնակցության խթանման» բանաձևին, ընդունված 2019թ-ին»:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Փորձագիտական հարցազրույցների ուղեցույց

Կառավարում

1. Որո՞նք են, ձեր կարծիքով, երիտասարդության քաղաքականության հիմնախնդիրներն այսօր Հայաստանում: Ի՞նչ մարտահրավերներ կառանձնացնեիք կապված երիտասարդության մասնակցության խնդիրների հետ կառավարման և խաղաղարարության ոլորտներում:

2. Ինչպիսի՞ն է ձեր դիրքորոշումը երիտասարդության պետական քաղաքականության և երիտասարդական ռազմավարության հայեցակարգի վերաբերյալ:

Քարտազորուցավարին՝ նման փաստաթղթեր թղթի վրա գոյություն ունեն, սակայն այսօր հստակ պատկերացում չկա գործո՞ւմ են արդյոք դրանք, թե՞ ոչ:

3. Ի՞նչ կարելի է անել, որ հայեցակարգը/ռազմավարությունը աշխատի: Ինչպիսի՞ն պետք է լինեն քայլերը, ո՞ր օղակներում հատկապես պետք է քայլել ձեռնարկել արդյունքի հասնելու համար:

4. Ի՞նչ կարծիք ունեք Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության լուծարման վերաբերյալ: Ո՞վ է այսօր պատասխանատու երիտասարդական քաղաքականության համար Հայաստանում: Ո՞վ պետք է պատասխանատու լինի ապագայում:

5. Ի՞նչ դեր է խաղում այսօր երիտասարդությունը քաղաքականությունում: Որքանո՞վ է լսելի երիտասարդների ձայնը որոշումների կայացման գործընթացում: Ո՞ր մեխանիզմներն են առավել արդյունավետ երիտասարդների ներգրավումն ապահովելու համար

Քարոզարարներին՝ նշել նաև այլ կարևոր պետական և հասարակական ոլորտների մասին:

6. Արդյո՞ք կարող եմք խոսել գեներային հավասարության մասին Չայաստանում՝ երիտասարդների մասնակցության հարցերի համատեքստում:
Քարոզարարներին՝ քննարկել թե՛ քաղաքական, թե՛ հասարակական ոլորտներում կանանց մասնակցության հարցերը:

7. Որքանո՞վ է իրատեսական և արդյունավետ համայնքներում երիտասարդական խորհուրդների ստեղծման գաղափարը: Կարո՞ղ եք առանձնացնել երիտասարդության ներգրավվածության և համակարգման այլ մեխանիզմներ:

Խաղաղաշինություն

8. Ի՞նչ դեր ունի հիմնապետը Է ունենա երիտասարդությունը խաղաղաշինության մեջ: Ի՞նչ իրավիճակ է այս իմաստով Չայաստանում: Տեղա՞յ եք արդյոք ներկայումս Կամ նախկինում/ՉԿ-ների կողմից իրականացվող ծրագրերից:

9. Լսե՞լ եք ՄԱԿ-ի ԱԽ 2250-ի բանաձևի մասին: Եթե այո, ապա ինչպե՞ս կարելի է խթանել երիտասարդության մասնակցությունը ԼՂ հակամարտության և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցերում՝ դրական ազդեցություն ունենալու տեսանկյունից:

10. Ի՞նչ խնդիրներ կառանձնացնե՞ք այսօր ԼՂ հիմնախնդրի և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացներում:
Քարոզարարներին՝ ուշադրություն հրավիրել երիտասարդ կանանց և տղամարդկանց մասնակցության հարցերին, որքանով է ընդհանրապես ԼՂ խաղաղության գործընթացը ներառական, այսինքն ներառում բոլոր շահառու խմբերին Չայաստանում:

11. Կարծո՞ւմ եք արդյոք, որ երիտասարդությունը ընդհանուր առմամբ/ հետաքրքրված է այս խնդիրների լուծման գործում ներգրավվելու մեջ: Ունեն արդյո՞ք, երիտասարդները ասելիք այս հարցերում:

12. Որքանո՞վ են կարևոր, ձեր կարծիքով, խաղաղության գործընթացում քաղաքացիական հասարակության խաղաղարար նախաձեռնությունները: Ո՞ր նախաձեռնությունները կառանձնացնե՞ք ԼՂ հակամարտության և Կամ հայ-թուրքական կարգավորմանն ուղղված ջանքերից:

13. Որո՞նք են այն խոչընդոտները, որ հանդիպել եք կամ կառանձնացնե՞ք «մյուս կողմի» հետ երկխոսության և խաղաղարարության գործընթացներում:

14. Ինչպե՞ս եք տեսնում տարածաշրջանի ապագան և հարաբերությունները մեր հարևանների հետ՝ 5 և 10-տարվա ժամանակահատվածում: